



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Ընտրություններով ստանձնենք պատասխանատվություն

Արցախի քաղաքական դաշտը 20 տարիների ընթացքում, իր բոլոր վայրկյաններում հանդերձ, պետք է համարել կայացած:

Արդեն իսկ մեկնարկել են ԼՂՀ 6-րդ գումարման ԱԺ ընտրությունները: Ժողովրդավարական համակարգում ընտրություններն այն գործընթացն է, որի միջոցով քաղաքական դաշտում գործող կուսակցություններն ու քաղաքական հոսանքները, իրենց առաքելությունից ելնելով, ամրակայում են իրենց դերը երկրի կառավարման ոլորտում:

Ժողովրդավարական համակարգը, ընդհանուր դիտարկմամբ, ինքնին համարվում է երկրի անվտանգության բաղադրիչներից մեկը: Այս առումով՝ Արցախում տեղի ունեցող յուրաքանչյուր ժողովրդավարության դրսևորման գործընթաց, այդ թվում՝ ներկայումս տեղի ունեցող ընտրությունները, պետք է համարել անվտանգության ապահովման միջոց:

Պատերազմի ընթացքում մեզ համար բազմիցս շոշափելի են դարձել ժողովրդավարության բացակայության դեպքում եւ ներքաղաքական դաշտի վայրկյանների հետեւանքով մեր թշնամու խոցելիությունը: Պետք է հիշել, որ պատերազմի ընթացքում հայկական կողմի հաջողությունները ձեռք են բերվել այն պահին, երբ Ադրբեյջանի ներքաղաքական դաշտում առճակատումների հետեւանքով իշխանափոխություն է տեղի ունեցել:

Վերոնշյալից ելնելով եւ այն փաստի հիման վրա, որ ընտրություններում հիմնական դերակատարները կուսակցություններն են՝ ծագում է կուսակցությունների եւ քաղաքական հոսանքների պատասխանատվության բեռը երկրի անվտանգության ապահովման ասպարեզում:

Անշուշտ, քաղաքական պատասխանատվության ընկալումը չպետք է միայն սահմանափակվի ընտրությունների ժամանակահատվածով: Յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն, անկախ նրանից՝ ընդդիմություն է, թե իշխանություն, պետք է ունենա պատասխանատվության իր բաժինը:

Յուրաքանչյուր երկրում, բնական է, որ ժողովրդավարությունն ունենում է իր գարգացման հոլովույթը: ՀՀ-ն արդեն իսկ Հայաստանի անկախությունից հետո եւ դեռեւս ՀՀ-ում առաջին սահմանադրության ընդունման օրերին կողմնակից է եղել խորհրդարանական համակարգի կիրառմանը: Տրամաբանական կլինի, որ Արցախում եւս կիրառվի այս համակարգը: Այդ անհրաժեշտության մասին իր հստակ տեսակետն է ներկայացրել ՀՀ-ն: Այս հարցում Արցախի քաղաքական դաշտում կանխազգուշացնել է նաեւ այլ կուսակցությունների համախոհությունը՝ Դաշնակցության հետ: Բնականաբար, խորհրդարանական համակարգի անցման դեպքում առավել շեշտակի է դառնալու կուսակցությունների պատասխանատվության ստանձնման անհրաժեշտությունն ու կարեւորությունը:

Խորհրդարանական համակարգը ենթադրում է ոչ թե անհատական մոտեցումներով որոշումների կայացում, այլ՝ կուսակցական հավաքական կարգի կիրառում: Այս հանգամանքը մեզ պարտադրում է, որ հատկապես նոր խորհրդարանի ձեւավորումից հետո ընկալելի կարգով սահմանվի յուրաքանչյուր կուսակցության պատասխանատվությունը:

Հարկ ենք համարում մեկ անգամ եւս շեշտել, որ որպես ելակետ այս բոլորն իրենց հիմքում պետք է ունենան երկրի անվտանգության ամրակայումը:

Զմոռանանք, որ ամեն մի հաջողված եւ ժողովրդավարական հիմունքներով անցկացված ընտրությունն եւս մեկ անգամ է, որ Արցախն աշխարհին ներկայանա որպես կայացած եւ իրավատեր երկիր:



## Ստեփանակերտում հանդիսավոր նշվեց ՀՀԴ 124-ամյակը

«Դաշնակցություն հանուն Արցախի» այս խորագիրն է կրում ՀՀ Դաշնակցության 124-ամյակի տոնակատարությունների շարքը, որը հանդիսավոր նշվում է Արցախի տարբեր շրջաններում: Տոնակատարությունների վերջին հանգրվանը Ստեփանակերտն էր, որտեղ մարտի 21-ին, Մշակույթի եւ երիտասարդության պալատի մեծ դահլիճում կայացավ տոնական միջոցառում:

Միջոցառմանը ներկա էին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Մ. Մուսայեյանը, ՀՀԴ Բյուրոյի անդամ, Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կ. Մախոյանը, ՀՀԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դ. Իշխանյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Ա. Ղուկասյանը, ԼՂՀ վարչապետ Ա. Հարությունյանը, ԼՂՀ փոխվարչապետ, ՀՀԴ Արցախի ԿԿ անդամ Ա. Աղաբեկյանը, պաշտոնատար այրեր եւ այլք:

Միջոցառումը բացվեց Արցախի եւ ՀՀԴ օրհներգերով՝ «Ոռակած» համույթի եւ «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի պե-

տական համույթի կատարմամբ: Այնուհետեւ մեկ րոպե լռությամբ ներկաները հարգեցին վերջին օրերին դարաբաղա-ադրբեյանական սահմանին հերոսաբար նահատակված զինվորների հիշատակը:

Ելույթով հանդես եկավ Արցախի թեմի առաջնորդը, ով շնորհավորելով ներկաներին՝ կարեւորեց Դաշնակցության անցած հայանվեր ճանապարհը եւ նրա դերակատարությունն Արցախի ազատագրման, պետականության կայացման ու հայրենիքի շենացման գործում:

Իսկ ՀՀԴ Բյուրոյի անդամ, Հայ դատի եւ քաղաքական հարցերի պատասխանատու Կիրո Մանոյանը փոխանցեց ՀՀԴ Բյուրոյի ողջույնի եւ շնորհավորանքի խոսքը:

Աշխարհի շուրջ երեք տասնյակ երկրներից շնորհավորական ուղերձներ էին ուղարկել ՀՀԴ Արցախի կառույցին, Արցախի ժողովրդին՝ ՀՀԴ 124-ամյակի կապակցությամբ, որն էլ տեսաիտվակի տեսքով ներկայացվեց միջոցառման մասնակիցներին ուշադրությամբ:

Ելույթով հանդես եկավ ԼՂՀ փոխվարչապետ, ՀՀԴ Արցախի ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանը:

Ներկաների դատին հանձնվեց ՀՀԴ 124-ամյակին նվիրված «Դաշնակցություն հանուն Արցախի» վերնագիրը կրող ֆիլմը:

Դաշնակցությունը, որպես ազգային կուսակցություն, ազգային արժեքների կրող եւ պահպանող ուժ, կարեւորում է մեր օրերում մշակույթի պահպանումն ու այդ արժեքների շարունակությունը: Այս արժեքները համակարգում շատ կարեւոր է ազգային տարագի պահպանումն ու տարածումը: ՀՀԴ-ի հրավերով Արցախում էր արմատներով Սիրիայից, «Շադոյան» նորածեւոյան տան հիմնադիր, դիզայներ Գեորգ Շադոյանը: Տեղի ունեցավ «Շադոյան» նորածեւոյան տան ժամանակակից ձեւավորմամբ ազգային տարագների առաջին եւ բացառիկ ցուցադրությունը, որը, ինչպես իր ելույթում նշեց հեղինակը, նվիրվում է Հայոց ցեղասպանության 100-ամյակին եւ կցուցադրվի այլ երկրներում եւս:

ՀՀԴ 124-ամյակին նվիրված տոնակատարությունը եզրափակվեց ուղիղ 104 տարի առաջ, ՀՀԴ 20-ամյակի կապակցությամբ գրված երգով՝ «Մենք ենք մեր սարերը» համույթի կատարմամբ:

## ՀՀԴ Արցախի կառույցի իշխանություն լինելու քաղաքական որոշումը շահադիտական չէ



ԼՂՀ փոխվարչապետ, ՀՀԴ Արցախի ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանի ելույթը Ստեփանակերտում կայացած ՀՀԴ 124-ամյակի տոնակատարության ժամանակ:

Մեծարգո պարոն նախագահ, Գերաշնորհ Սրբազան հայր, հարգելի հյուրեր, սիրելի ընկերներ...

Կարդացեք 2-րդ էջում

## Արիեստավարժ խորհրդարան ունենալն անհրաժեշտություն է. Վահրամ Բալայան



ՀՀԴ անդամ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վահրամ Բալայանը մեզ հետ ունեցած անկեղծ զրույցի ժամանակ խոստովանեց, որ իր պատմաբանի մասնագիտությունը փոխանցվել է ժառանգաբար...

Կարդացեք 3-րդ էջում

### ՀՀ Արցախի կառույցի իշխանություն լինելու քաղաքական որոշումը շահադիտական չէ



**ԼՂՀ փոխվարչապետ, ՀՀ Արցախի ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանի ելույթը Ստեփանակերտում կայացած ՀՀ 124-ամյակի տոնակատարության ժամանակ,**

Մեծարգո պարոն նախագահ, Գերաշնորհ Սրբազան հայր, հարգելի հյուրեր, սիրելի ընկերներ,

Այսօր այստեղ ենք՝ միասին 124-րդ անգամ նշելու Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը: Մենք՝ դաշնակցականներս, այն բարձրաձայնելով որպես տոնակատարություն, բարձրաձայնում ենք նաև, որ այն լոկ տոնակատարություն չէ, այլ՝ հաշվետվության օր:

Դաշնակցությունը 124 տարի է արդեն, որ տոնում է իր տոնը ժողովրդի հետ եւ հաշիվ տալիս իր ժողովրդին: ՀՀ օրվան նվիրված միջոցառումներն ավանդաբար գերծ են եղել զուտ կուսակցական ընկալումից: Մենք այն միշտ վերածել ենք հայրենասիրական ոգու բարձրացման յուրօրինակ տոնի եւ այդ տոնը նվիրել ժողովրդին: Եվ ինչպես մեծ դաշնակցական Ռուբեն Տեր-Մինասյանն է ասել. «Դաշնակցության տեսաբանը ժողովուրդն է: Մեր ծրագիրը հարմարեցնում ենք ժողովրդին եւ ոչ թե ժողովրդին՝ մեր ծրագրին: Մենք հագուստ ենք հարմարեցնում մարմնին եւ ոչ թե մարմնը՝ հագուստին. դրա մեջ է մեր ժողովրդականության գաղտնիքը եւ կուսակցության ուժը»:

1890 թվականին հայ ժողովուրդը հիմնեց Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որ համախմբի մեր ազատության երթը: Մենք մղեցինք 1918 թ. Մայիսյան հերոսամարտը եւ հայրենի հողի վրա կերտեցինք Հայաստանի անկախ Հանրապետությունը:

Հայության կամքով ՀՀ-ն ստանձնեց Հայաստանի Առաջին Հանրապետության պատասխանատվությունը: Հայոց կորուսյալ հողերին տեր կանգնելու նպատակով՝ 1917-ին ՀՀ-ն ստեղծեց Արցախի ինքնիշխան կառավարությունը, որը ժողովրդի հետ միասին մինչեւ 1920թ. անխաթար պահեց Արցախի սահմանները:

Այդ օրերին եր, որ ՀՀ Արցախի «Ապառաժ»-ի Կենտրոնական Կոմիտեն հատուկ կոչով դիմեց բնակչությանը եւ քաղաքական ուժերին, որում ասվում էր. «Նեցուկ լինել սոր կառավարությանը եւ պատրաստ լինել ինքնազոհությամբ նվաճված ազատությունը ամրապնդելու: Պետք է լռեն կուսակցական տարածայնությունները, խմբվել, խտացնել շարքերը՝ դիմադրելու համար հակահեղափոխական փորձերին»:

1920թ. դեկտեմբերի 2-ին, հավատարիմ հայրենիքի գոյության համար պայքարելու իր ուխտին, ՀՀ-ն կամավոր հրաժարվեց իշխանությունից՝ գերադասելով հայրենիքի ֆիզիկական անվտանգությունը եւ դարձավ վտարանդի, գործեց Սփյուռքում՝ հայրենիքի անկախության գաղափարի շուրջ համախմբելով հայությանը՝ ստեղծելով կրթական, մշակութային, մարզական, բարեգործական, երիտասարդական միություններ, հոգալով սերունդների հայեցի դաստիարակության գործը:

Գործելով աշխարհի ավելի քան 30 երկրներում՝ միշտ վեր է պահել եռագույնը՝ երիտասարդության սրտում անթեղած պահելով Արցախը Մայր Հայաստանին վերամիավորելու, Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստան ունենալու գաղափարը: Այսպես էր ՀՀ-ն Սփյուռքում գնկվորագրում հայության դատի նվիրյալներին, ովքեր հետագայում պիտի գործեին Հայաստանում ու Արցախում:

Այսօր ՀՀ-ն ՀՀ իշխանության հետ համագործակցաբար, իսկ ԼՂ-ում՝ որպես իշխանություն, փորձում է մասնակից լինել յուրաքանչյուր հայի համար ապահով, արդար ու շեն տուն հիմնելու գործին:

Հայաստանի եւ Արցախի հզորացումն ու ամրապնդումը մեր գերխնդիրն է: Մեր պետականությունը միակ միջոցն է հայ ժողովրդի անվտանգ գոյության, զարգացման եւ ազգային երազների իրականացման համար:

1989-ից գործում ենք Արցախում. գործել ենք ընդհատակում՝ ստեղծելով մարտական խմբեր, ինքնակազմակերպել մեր ժողովրդին: 1991-ին, հավատարիմ լինելով ազգային-ազատագրական պայքարին, մի կողմից ստանձնել էինք պատասխանատվություն ԼՂ պետականաշինության գործին՝ ակտիվ դերակատարություն ունենալով անկախության հանրաքվեի անցկացմանը եւ առաջին Գերագույն խորհրդի ընտրություններին, մյուս կողմից՝ մեր կազմավորած ջոկատները մարտնչում էին Գետաշենում, Շահումյանում, Արցախի մյուս շրջաններում:

Մենք Արցախով եւ Արցախի ազատագրական պայքարով ենք սկսել մեր գործունեության նոր շրջանը՝ անմաքորդ նվիրվելով Արցախին:

Արցախի ազատագրումը Դաշնակցության համար եղել է մտում է Հայ Դատի, ամբողջական հայությանը՝ ամբողջական Հայաստանի կերտման անբաժան մասնիկը: Ավելին՝ Արցախը Հայ Դատի փորձաքարն է:

Մենք, համատեղած համայն հայության ներուժը, գործում ենք Աստվածային խոյանքով վերանվաճած մեր Արցախ պետության իրավական անկախությունը կերտելու եւ միջազգային ճանաչմանը հասնելու համար:

Մենք աշխարհասփյուռ կառույցներով եւ ազգային գաղափարական հզոր հենքով համայն հայությանը համախմբում ենք Արցախի շուրջ՝ Արցախի պետականությունը սպառնացող եւ օրեցօր ահագնացող վտանգը չեզոքացնելու համար:

2012թ. ԼՂ նախագահական ընտրություններին ՀՀ-ն քաղաքական որոշում է կայացրել՝ սատարել ԼՂ գործող նախագահին՝ այդպիսով կրելով քաղաքական պատասխանատվություն: ՀՀ Արցախի կառույցի՝ իշխանություն լինելու քաղաքական որոշումը շահադիտական չէ կամ անձին ուղված որոշում չէ: Այն էլ-նում է մեր ժողովրդի եւ մեր պետականության շահից, հայ ժողովրդի առջեւ

ստանձնած մեր պատասխանատվությունից:

Ոչինչ չի խոստանում Դաշնակցությունն իր անդամներին՝ ո՛չ դիրք, ո՛չ պատիվ, ո՛չ գանձ եւ ո՛չ էլ հանգիստ: Եթե երբեմն հասցնում է քաղաքական բարձր դիրքի՝ միմիայն նրա համար, որ կատարի դաշնակցական պարտականություն: Երեկ պարզ գնկվոր էիր կամ խմբապետ, այսօր դառնում ես նախարար, բայց չես դադարում մնալ դաշնակցական՝ ելքակա ՀՀ Ծրագրին եւ Կանոնագրին: Ու երբ նկատում է, թե նոր դիրքում դու փորձում ես մտածել ու գործել որպես ոչ դաշնակցական, նա բեզգահավիժում է չարաչար՝ առանց նայելու հռչակիդ ու դիրքիդ: Շատերս լսել ու տեսել ենք հայտնի անուններ, որ ստեղծել է Դաշնակցությունը, եւ գահավեժ անկումներ, որը ստեղծել է նույն Դաշնակցությունը նույն մարդկանց համար: Սա իմ խոսքերը չեն, այլ՝ մեծանուն դաշնակցական Նիկոլ Աղբալյանի:

Սիրելի ընկերներ, Դաշնակցականը միայնակ ասպետ չէ պայքարի դաշտում: Դաշնակցականներն իրենց գիտակցական եւ բարոյական կողմերով մոտավորապես նման են իրար: Այս հենքի վրա ամեն մի դաշնակցական իր նկարն է գործում գորգի զարդերի նման: Տարբեր են գույները, նկարն ու դասավորությունը, տարբեր է մեծությունը, բայց նույնն է հենքը, եւ բոլորն էլ գորգ են:

Մենք հեղափոխական ենք, եւ հեղափոխականությունը Դաշնակցության անվան անբաժան մասն է: Այն ինքնանպատակ չէ, այլ՝ պայքարի ձեռնարկ: Սակայն եղել են շրջաններ, որ ՀՀ-ն եղել է բարեփոխիչ ու խաղաղ կազմակերպություն: Շատերն այս կերպարանափոխությունը փորձում են որակել որպես անսկզբունքայնություն, մինչդեռ՝ մենք ուժեղ ենք եւ ազատ ամեն կարգի նախապաշարունակներին:

Մենք սոցիալիստներ ենք եւ արդար հասարակարգի ձգտողներ: Սոցիալիզմը հայ մարդու ինքնագիտակցության մեջ է, եւ մենք կերտելու ենք այն: Հայ Յեղափոխական Դաշնակցությունը գտնում է՝ սոցիալիզմի ճանապարհով է, որ մարդկության քաղաքական, տնտեսական եւ սոցիալական զարգացումն ընթանում է արդար եւ համերաշխ հարաբերություններով:

Սոցիալիզմը ձգտում է ինչպես անհատի ազատությանը, այնպես էլ ազգերի՝ իբրեւ հավաքական անհատականությունների ամբողջական ազատագրությանը, անկախությանն ու գերիշխանությանը, եւ նրանց համերաշխ համակցությանն ու իրավահավասար գործակցությանն:

ՀՀ Դաշնակցությունը հավատում է, որ սոցիալիստական իդեալը անիրականանալի է առանց ժողովրդավարության, իսկ ժողովրդավարությունը թերի է եւ սահմանափակ՝ առանց սոցիալիզմի:

Այս զուգահեռ պայքարները մղվում են ժողովրդավարական միջոցներով, իսկ ժողովրդավարության խափանման պարագայում՝ նաեւ հեղափոխությամբ:

ՀՀ Դաշնակցությունը, հավատարիմ իր գաղափարաբանությանը, իր բոլոր ուժերով նվիրվում է բովանդակ հայ ազգի քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային շահերի պաշտպանությանը՝ հանուն Ազատ Հայի, Ազատ Զաղաքացու եւ Ազատ Հայրենիքի կերտման:

Ահա այն տեսլականը, որով արդեն 124 տարի առաջնորվում է Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: Ունենալով

124 տարվա քաղաքական պաշար, գաղափարական ամուր հենք եւ ազգի ու պետականության հզորացման հստակ տեսլական՝ մենք՝ դաշնակցականներս, հենց այսկերպ ենք պատկերացնում Արցախի ու Հայաստանի համատեղ ապագան:

Հարգելի գործընկերներ, Այս տոնակատարության կարգախոսն է՝ Դաշնակցություն հանուն Արցախի: Եվ Դաշնակցություն հանուն Արցախի կարգախոսով է, որ ՀՀ 32-րդ Ընդհանուր ժողովը վերահաստատել է իր դերակատարումն Արցախի Հանրապետության ազգային, քաղաքական եւ հասարակական կյանքում՝ հաստատելով, որ.

- շարունակելու է ԼՂՀ միջազգային ճանաչման խնդրի հետապնդումը,

- համախմբելու է համայն հայության ներուժը Արցախյան հիմնախնդիրը ազգային-ազատագրական եւ ինքնորոշման պայքարի դաշտում պահելու համար,

- հետամուտ է լինելու ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի միջեւ ռազմաքաղաքական դաշինքի կնքմանը,

- գերակա խնդիր է համարելու համահայկական ճիգերով ԼՂՀ-ի վերաբնակեցումը եւ բնակչության եական աճը,

- ապահովելու է Դաշնակցության ներդրումը ԼՂՀ տնտեսական եւ սոցիալական զարգացման միջնաժամկետ եւ երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի մշակման եւ իրագործման գործընթացներում,

- սատար է լինելու Արցախի իշխանության՝ Արցախի կրթական, մշակութային, առևտրային ներկայացուցչություններ բարեկամ երկրներում հիմնելու նախաձեռնությանը:

Դաշնակցություն հանուն Արցախի կարգախոսով է, որ ՀՀ-ն ԱՄՆ-ում, Արգենտինայում, Կանադայում, Իրանի Իսլամական Հանրապետությունում, Լիբանանում, Զուլվյթոմ, Ավստրալիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում եւ ավելի քան 30 երկրներում գործելու է հանուն Արցախի հզորացման՝ իր շուրջը համախմբելով աշխարհասփյուռ հայությանը:

Դաշնակցություն՝ բառիս բուն իմաստով կարգախոսով է, որ կարող ենք արցախցիներս՝ անկախ գաղափարական, քաղաքական մոտեցումներից, մեկտեղել մեր կարողությունները, դիմակայել թե՛ արտաքին եւ թե՛ ներքին մարտահրավերներին: Եվ միայն այսկերպ Արցախի ժողովուրդը կարող է ազգակ ուղարկել եւ իր շուրջը համախմբել համայն հայությանը:

Ամփոփելով խոսքս՝ կցանկանայի նշել, որ մենք կարող ենք ակնկալել, որ ազգը երբեւէ կհասնի այն գիտակցությանը, թե Դաշնակցությունը պատմական ազգակ է հայ իրականության մեջ եւ իր գիտակցության չափով նյութապես կնպաստի ՀՀ գոյությանը եւ գործին: ՀՀ-ն ավանդապահ կուսակցություն է, եւ այդ ավանդության մեջ է իր միության եւ նույնության գաղտնիքը: Նա այնքան անփոփոխ չի մնում, որ հնանա ու անպետքանա հանրային կյանքի ղեկավարության համար, բայց նաեւ այնքան չի փոխվում, որ դառնա հեղհեղուկ: Նա իր բնույթով մնում է նույնը, բայց հարմարվում է կյանքին: Փոփոխությունները ոչ թե բեկում են, այլ՝ հոսում, ոչ թե հեղաշրջում, այլ՝ բարեշրջում:

Եվ, ուրեմն, ոչինչ չի մնում ասել, քան կրկնել՝ Դաշնակցություն հանուն Արցախի:

# Արհեստավարժ խորհրդարան ունենալն անհրաժեշտություն է. Վահրամ Բալայան



ՅՅԴ անդամ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վահրամ Բալայանը մեզ հետ ունեցած անկեղծ զրույցի ժամանակ խոստովանեց, որ իր պատմաբանի մասնագիտությունը փոխանցվել է ժառանգաբար: Յորակյան եւ մորական կողմից պապերը պատմաբաններ են եղել: Նրանց արժանի թոռն էլ, շարունակելով պապերի գործը, 26 տարեկանում արդեն գիտությունների թեկնածու է դարձել: Այժմ պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր է, ունի 30 տարվա բուհական գիտամասնավարժաման փորձ: 116 հրատարակված աշխատանքների հեղինակ է, որից 23-ը հրատարակվել է արտասահմանում: Նա 7 գրքերի հեղինակ է, 6 գրքերի՝ համահեղինակ:

Թե ի՞նչն է նպաստել 1991 թվականին Դաշնակցությանն անդամագրվելուն, պատասխանում է՝ պատճառը կուսակցության պատմությանն ու գաղափարախոսությանը քաջաճանոթ լինելն է: «Պատմաբանների զգալի մասը դառնում են դաշնակցականներ, որովհետեւ ծանոթ են Դաշնակցության անցած ուղուն, գաղափարախոսությանը, գործելաոճին եւ ավելի շատ են տեսնում կուսակցության այն ներուժը, որը թույլ է տալիս նրան առաջնորդելու ժողովրդին»:

Նրա համոզմամբ՝ հանրությունը, ընդհանուր առմամբ, տեղյակ չէ Դաշնակցության գաղափարներին, գործելաոճին: Սա այն բանն է, որի ուղղությամբ պետք է աշխատեն ոչ միայն կուսակցականները, այլեւ՝ երկիրը հարգող հանրությունը, մտավորականությունը:

«Եթե ուզում ենք ապրել այս տարածաշրջանում, ունենալ զարգացող երկիր, բնակավայր, պետք է ցանկացած ոք ծանոթ լինի իր ազգային կուսակցության գաղափարներին, նրա կենսագրությանը», - ասում է Վահրամ Բալայանը:

Պատմում է, որ երբ սկսվեց Արցախյան շարժումը, աշխատում էր Երեւանում, հայրենակիցների հետ մասնակցում էր հանրահավաքների կազմակերպման աշխատանքներին, Ղարաբաղին օգնելու հարցերին էր օժանդակում: Այդպես էլ սկսեց ներգրավվել թե՛ ազգային-ազատագրական շարժմանը, թե՛ պետականության ձեւավորմանը:

«Բնականաբար, միայնակ անձն այդ ամենը լիարժեք անել չի կարող, քանզի անհրաժեշտ է լինել համախոհների մի շրջանակում, որոնց հետ միասին կկարողանաս ճանապարհ անցնել, գործել: Ես վստահ էի, որ այդ ուժն ինձ համար կարող է լինել միայն Դաշնակցությունը, եւ 1991-ին անդամագրվելով նրան՝ առ այսօր իմ հնարավորությունների սահմաններում փորձում եմ Դաշնակցությանն օգտագործել մեր պետականության կայացման համար, մյուս կողմից էլ, իմ կարողությունների չափով, կյանքի այսօրվա պահանջներից ելնելով՝ ձգտում եմ կուսակցությունը կազմակերպական տեսանկյունից ավելի ամրապնդել: - ասում է նա ու շեշտում: - քանի որ ՅՅԴ-ն 124 տարեկան է, հետեւաբար՝ կյանքի նոր հրամայականին պետք է համաքայլ քայլել: Ես գտնում եմ, որ ամեն մի սերունդ իր ներդրումը պետք է ունենա կուսակցության կազմակերպական, կառույցը հզորացնելու, նոր լիցք հաղորդելու գործում...»:

Վահրամ Բալայանն այսօր աշխատում է 2 գրքերի հրատարակման ուղղությամբ՝ «Շուշիի տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում», «Արցախահայության մասնակցությունն Արեւմտյան Յայաստանի ազատագրման գործում 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին»: Միաժամանակ նա աշխատում է նաեւ 1991 թվականի սեպտեմբերի 2-ի նշանավոր Նիստի փաստաթղթերի ժողովածուի ուղղությամբ:

«Ինձ սրտամոտ են երկու գրքեր՝ «Արցախի պատմությունը հնադարից մինչեւ մեր օրերը», որը թարգմանվել է նաեւ անգլերեն ու բավականին պահանջարկ ունի թե՛ պատասխանում, թե՛ այստեղ, ինչպես նաեւ «Ազատագրության ու պետականության համար պայքարի դրսեւորումներն Արցախում 1813 թվականից մինչեւ մեր օրերը» մենագրությունը», - ասում է նա:

Խոսելով ԼՂՀ-ում գիտության այսօրվա վիճակի եւ առհասարակ զարգացումների մասին՝ պրոֆեսորը նշում է, որ այսօր անս-

պառ հնարավորություն կա, որպեսզի գիտական իրեն դրսեւորի մասնավոր կիրառական, բնագիտական գիտությունների բնագավառներում: Այդ ասպարեզում անելիքները շատ են: Ավելին՝ այսօր բարձրակարգ մասնագետները կարող են իրենց վաստակով իրենց տունը պահել:

«Այսքանով հանդերձ՝ ՅՅ-ում եւ ԼՂՀ-ում պատշաճ ուշադրություն չի դարձվում կրթությանն ու գիտությանը: Ես հասկանում եմ, որ մենք ունենք մի շարք կարելի խնդիրներ, սակայն քանի որ մեր երկիրը չունի բնական մեծ պաշարներ, բայց մյուս կողմից էլ ժողովուրդը գենետիկ հակվածություն ունի դեպի կրթությունն ու գիտությունը, ուստի պետք է մեծ ուշադրություն դարձնել այս բնագավառներին», - համոզված է պատգամավորը:

Նա վստահ է, որ այն երկրները, որոնք ներդրումներ են ունեցել այս բնագավառներում, բավական լավ արդյունքներ են ունեցել: Գիտությունը, վերջիվերջո, կյոթակա-նանում, դառնում է տնտեսություն, արտաքին քաղաքականություն, մշակութային զարգացման հնարավոր պայմաններ է ստեղծում: Նրա հավաստմամբ՝ այս բնագավառում մենք թերացումներ ունենք եւ շատ աշխատանքներ կան անելու:

Վահրամ Բալայանը նշում է՝ մեր բյուջեից գիտությանն ու կրթությանը տրամադրվող գումարներով հնարավոր չէ զգալի նվաճումների հասնել: Այս բնագավառը չի կարող զարգանալ առանց լուրջ ներդրումների: «Կարծում եմ՝ մեր ապագա ԱԺ-ն այս բանագավառում մեծ անելիքներ ունի: Պատահական չէ, որ Դաշնակցությունն իր ծրագրի առաջին կետը հենց դրանով է սկսել: Սա անչափ անհրաժեշտ է եւ առանց դրա հնարավոր չէ ապահովել մեր զարգացումը», - շեշտում է նա:

Պատասխանելով հարցին, թե ինչպե՞ս է վերաբերում ոմանց մոտ արմատավորված այն տեսակետին, որ Դաշնակցությունը միայն պատերազմի կուսակցություն է, Վահրամ Բալայանը նշեց. «Քանի որ Դաշնակցությունն ազգային կուսակցություն է, նրա Ծրագիրը, գործելաոճը նպատակաուղղված է իր ազգն իր հայրենիքում պահելուն, պետականություն ունենալուն եւ զարգացնելուն: Մենք դարձրինք ընթացքում ազատ չենք եղել, պետականություն չենք ունեցել, իսկ ազատությունն ու պետությունը սկսուտեղի մեջ ոչ ոք չի մատուցում: Ոչ մի ժողովուրդ առանց արյան եւ քրտինքի ձեռք չի բերել այն. այն ձեռք է բերվում պայքարի արդյունքում: Դաշնակցությունն այդ ուղղությամբ է պայքարել: Եւ պատահական չէ, որ ՅՅ առաջին հանրապետության պե-

տության հիմնադիրները եղել են դաշնակցական գործիչներ, որոնք, չունենալով ոչինչ, ստեղծել են պետականություն»:

Շարունակելով միտքը՝ Վ. Բալայանը նշեց, որ Առաջին Յանրապետության հիմքերի վրա էլ ստեղծվել է Խորհրդային Յայաստանը, այնուհետեւ՝ մեր Երրորդ Յանրապետությունը, որում Դաշնակցությունն իր դերակատարությունն է ունեցել: ԼՂՀ հեղինակը, ժողովրդի հետ միասին, հենց Դաշնակցություն կուսակցությունն է: Պատահական չէ, որ ԼՂ ազգաբնակչությունն իր ճակատագիրը, իր պետականությունը կերտելու դերակատարությունը 1980 թվականների վերջին եւ 90-ականների վեջին հանձնել էր Դաշնակցությանը: Դաշնակցությունը, կանգնած լինելով ԼՂՀ կազմավորման ակունքներում, ժողովրդի հետ միասին իր երկրի առաջին առաջնորդ է տեսել դաշնակցական Արթուր Մկրտչյանին:

«Դաշնակցությունը մշտապես պայքարել է նրա համար, որ հայ ժողովուրդն ապահով ապրի իր երկրում, որպեսզի հանրությունը կարողանա պահպանի իր ազգային հպարտությունը: Այսօր մարտահրավերներն ուրիշ են: Իհարկե, պատերազմը դեռ շարունակվում է, սակայն թիկունքում կան բազում այլ հարցեր: Դեռ այստեղ է, որ Դաշնակցությունն անելիք ունի եւ մյուս կուսակցություններին մրցակցության է հրավիրում», - ասաց նա:

Այն կարծիքը, որ իբր Դաշնակցությունը կարող է միայն մարտի դաշտում գործել, չի համապատասխանում իրականությանը: Նա ընդգծեց, որ Դաշնակցությունը ապագայի կուսակցություն է, եւ պատահական չէ, որ նա էլ հենց այսօր դառնել է բազում տնտեսական, սոցիալական, մշակութային ծրագրերի հեղինակ:

Արհեստավարժ խորհրդարան ունենալով Վ. Բալայանն անհրաժեշտություն է համարում:

«Արցախում օրենսդիր, գործադիր եւ դատական թեւերի բաժանումը լիարժեք չի կատարված: Արհեստավարժ խորհրդարանի գոյության դեպքում, կարծում եմ, հակակշռությունների մեխանիզմը կսկսի ավելի արդյունավետ աշխատել, մյուս կողմից՝ մրցակցություն կլինի խորհրդարանում եղած խմբակցությունների միջեւ», - առանձնացնում է նա:

Նա գտնում է, որ ԼՂՀ ԱԺ ընտրություններին Դաշնակցության առաջարկած «Խաղաղություն, արդարություն, աշխատանք» կարգախոսը հերք բնութագրում է այդ քաղաքական ուժին:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

# Թուրքիայի ղեկավարությանը պետք է ընդունել որպես խուճապի մատնված, քաղաքական հստակ ուղղություն չունեցող ուժի. Կիրո Մանոյան

artsakhtert.com-ի հարցերին պատասխանում է ՅՅԴ Բյուրոյի անդամ, Յայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը

**Պարոն Մանոյան, Յայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ ՅՅ Նախագահ Ս. Սարգսյանը ներկայացրեց Յամահայկական հռչակագիրը, որը փաստորեն ուղերձ էր համայն մարդկությանը, եւ որում հայ ժողովրդի հիշողությունն է, երախտագիտությունը ու նաեւ պահանջատիրությունը: Ինչպե՞ս կբնութագրեիք այդ տարելիցի Նախաշեմին միջազգային հանրության կեցվածքը եւ փաստաթղթի միջազգային արձագանքները:**

- Ազգովի հռչակեցինք Յամահայկական հռչակագիրը, որը Նախագահն ընթերցեց Ծիծեռնակաբերդում՝ Յայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի անդամների եւ բազմաթիվ երկրներից ժամանած տարածաշրջանային հանձնախմբերի ներկայացուցիչներ-

րի մասնակցությամբ: Նախքան միջազգային համայնքի կեցվածքին անդրադառնալը՝ պիտի կարեւորեմ հայության կեցվածքը, եւ այդ իմաստով՝ Յամահայկական հռչակագրի նշանակությունը: Յամահայկական է հռչակագրի բովանդակությունը, համահայկական է այն մարմինը, որը որդեգրեց այդ հռչակագիրը: Դա պետական հանձնաժողովն է, որում իսկապես ներկայացված են մեր բոլոր հիմնական կառույցները:

Հռչակագրին ուղղակի արձագանք չի եղել, բայց դա չի նշանակում, թե այն անուշադրության է մատնված: Յակառակը, բոլորն էլ ընդունում են, որ ծանրակշիռ խոսք է ասվել, ուրեմն, պետք չէ շատ թեթեւ արձագանքել, մասնավոր՝ որ՝ Հռչակագրի հրապարակումից օրեր անց ՅՅ Նախագահը քայլ արեց՝ Ազգային ժողովից հետ կանչելով հայ-թուրքական արձանագրությունները: Ծիշտ է, ստորագրությունը հետ չվերցրեց՝ ասելով. «Իմ քայլն իրավական չէր, ես ոչ թե սպանել եմ այդ արձա-

նագրությունները, այլ քաղաքական պատգամ եմ փոխանցել թուրքիային եւ աշխարհին»: Ամեն դեպքում Նախագահի քայլը Յամահայկական հռչակագրի ոգով էր: Նախագահի քայլին արձագանքեց միայն Միացյալ Նահանգները. այդ երկիրն ինչ-որ չափով հանգստություն արտահայտեց առ այն, որ Յայաստանը ստորագրությունը պահում է, եւ հույս հայտնեց, որ գործընթացը շարունակություն կունենա: Իրականությունն այն է, որ Յայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավման գործընթաց չկա Թուրքիայի կողմից առաջ քաշվող Նախապայմանների պատճառով:

Նշեմ, որ արդեն 100-րդ տարելիցին կան առաջընթացի որոշ դրսեւորումներ: Անցյալ տարի էլ ակնատես եղանք դրական դրսեւորման. Եվրոպական երկու պետությունների՝ Ֆրանսիայի եւ Գերմանիայի ղեկավարները Թուրքիային կոչ արեցին առերեսվել սեփական պատմության հետ:

Դրանից առաջ ԱՄՆ Նախագահը Թուր-

քիա կատարած այցի ժամանակ Լույսլայի-սի կոչով հանդես եկավ: Վերջերս էլ Եվրոպական ժողովրդական կուսակցությունն ընդունեց բանաձեւ, որն արդյունք է Յայաստանում այդ կառույցին անդամակցող հայկական երեք կուսակցությունների աշխատանքների: Եվրոպական ազդեցիկ քաղաքական ուժը Յայոց ցեղասպանության հարցում որդեգրեց հստակ դիրքորոշում. բանաձեւը ոչ միայն ճանաչման, պատմական փաստի դատապարտման, այլ նաեւ հատուցումների մասին է: Սա նշանակում է, որ միջազգային հանրությունն սկսել է դրական արձագանքել Յամահայկական հռչակագրի հատուցմանը վերաբերող դրույթներին: Իսկ դրանցում նշվում է, որ մենք պատրաստում ենք իրավական պահանջների թղթածրար, որը կանդրադառնա հայության անհատական, համայնքային եւ համազգային իրավունքներին ու շահերին, եւ արդեն տեսնում ենք, որ, օրինակ, ԵԺԿ-ի բանաձեւում կա խոսք հատուցման մասին:

# Թուրքիայի ղեկավարությանը պետք է ընդունել որպես խուճապի մատնված, քաղաքական հստակ ուղղություն չունեցող ուժի. Կիրո Մանոյան

3 ← Թուրքիայի ղեկավարության եւ հատկապես Նախագահի՝ այս վերջին օրերին արտահայտած մտքերից հետեւում է, որ այդ ղեկավարությանն իսկապես պետք է ընդունել որպես խուճապի մատնված՝ քաղաքական հստակ ուղղություն չունեցող ուժի: Անցյալ տարվանից սկսած, երբ հրավեր ուղարկեցին 33 Նախագահին՝ ներկա գտնվելու ապրիլի 24-ին Նախատեսված՝ Գալիպոլի ճակատամարտի 100-ամյակին նվիրված միջոցառմանը, մինչեւ արխիվների մասին վերջին խոսակցությունները՝ վկայում են թուրքական իշխանությունների խուճապային տրամադրության մասին:


Հարկ է փաստել նաեւ, որ Թուրքիայում ձեւավորվում է ոչ շատ մեծ, բայց ինչ-որ չափով կարեւոր հասարակական տեսակետ, որը ոգեկոչում է Ցեղասպանության զոհերի հիշատակը: Այս տարի դա տեղի է ունենալու թուրքական 5-6 քաղաքներում: Մենք աշխարհին ներկայացել ենք մեկ ծայրով՝ Համահայկական հռչակագրով, եւ արձագանքները ցույց են տալիս, որ այն դրականորեն է ընկալվում միջազգային հանրության կողմից՝ եթե անգամ այդ մասին ուղղակի ակնարկներ չեն արվում:

**- ԱՄՆ Կոնգրեսում մի խումբ կոնգրեսականների կողմից ներկայացվել է ճշմարտության եւ արդարության բանաձեռն Հայոց Ցեղասպանության մասին: Սովորաբար, Ցեղասպանության զոհերի ոգեկոչման օրը հայությունը սպասում է, թե ինչպիսին կլինի ԱՄՆ Նախագահի ելույթը: Ի՞նչ եք կարծում, թուրք-ամերիկյան ներկա հարաբերությունները կարո՞ղ են ինչ-որ կերպ անդադրադադար 100-րդ տարելիցին ամերիկյան կողմից հնչեցվելիք խոսքի բովանդակության վրա:**

- Կարծում եմ, չպիտի սպասենք, թե ինչ կասի ԱՄՆ Նախագահը: Ոչ թե կարելու է, այլ դա մի խնդիր է, որն ավելի շուտ վերաբերում է Միացյալ Նահանգների Նախագահի թեկնածուի կողմից տրված խոստմանը: Նա խոստացել էր իր քաղաքացիներին եւ մասնավորապես հայերին՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ամերիկահայերն ու նրանց բարեկամները հետամուտ են, որ Նախագահը կատարի իր խոստումը: Կոնգրեսում ներկայացվել է բանաձեռն, բայց կա նաեւ Բ. Օբամային ուղղված երկու նամակ սենատորների եւ կոնգրեսականների կողմից, որոնցում կոչ է արվում Նախագահին հարգել իր ընտրական խոստումը եւ իրերը կոչել իրենց անուններով: Դա, անշուշտ, կարելու է, բայց դրանից չեն կախված մեր բոլոր հարցերը: Մենք դեռեւս չգիտենք, թե ով է ներկայացնելու Միացյալ Նահանգները ապրիլի 24-ին Երեւանում. ակնկալվում է բարձրաստիճան պաշտոնյայի մասնակցություն: Իսկ մայիսի 8-ին Վաշինգտոնում կկայանա տարելիցին նվիրված մեծ միջոցառում, որին կմասնակցեն 33 Նախագահը եւ երկու կաթողիկոսները: Հրավիրված է ԱՄՆ Նախագահը: Այս երկրի կեցվածքը Ցեղասպանության հարցում դեռեւս դրսևորվելու առիթ ունի, եւ ճիշտ է, որ ԱՄՆ-ի հետ Թուրքիայի հարաբերությունների ներկա վիճակն ինչ-որ չափով հույս է ներշնչում, որ ԱՄՆ-ն կարող է դրական կեցվածք ցուցաբերել՝ ոչ թե պարզապես հակառակվելով Թուրքիային, այլ նվազ չափով հաշվի առնելով թուրքական իշխանությունների զգայությունները: Թուրքիայի ղեկավարությունն էլ, պարզ է, դրան խոչընդոտելու նպատակով օգտա-

գործելու է բոլոր միջոցները: Թուրք-ամերիկյան հարաբերությունների ներկա վիճակը կարող է իր դրսևորումն ունենալ կլինի դա բանաձեռնի տեսքով, թե Նախագահի կամ այլ բարձրաստիճան պաշտոնյայի կողմից հայտարարությամբ՝ սպասենք եւ կտեսնենք: Կարծում եմ, դրական տեղաշարժի հիմքեր կան:

**- Ձեր խոսքում նշեցիք, որ թուրքական հասարակության մեջ ի հայտ են գալիս նոր տրամադրությունների կողմեր, ովքեր հակված են իրերն անվանել իրենց անուններով: Վկայությունը՝ վերջերս Երեւանում կայացած «Արարատի ստորոտին» խորագրով մեդիա-ֆորումն էր եւ դրան մասնակցած թուրք լրագրողների ելույթները: Մյուս կողմից էլ՝ Թուրքիան իր ժխտողական գիծն իրականացնելիս փորձում է օգտագործել երկրի ազգությամբ հայ մտավորականներին՝ ներգրավելով նրանց պետական մակարդակով ծավալված գործընթացներում, մասնավորապես խորհրդարանական ընտրարշավում: Ինչպե՞ս եք վերաբերվում այս իրողություններին:**



- Թուրքական հասարակության մի փոքրամասնության մոտ առկա է մտածելակերպի փոփոխություն, որը հակադրվում է պետական քաղաքականությանը: Ասեմ, որ մեդիա-ֆորումին ներկայացած թուրք լրագրողները «Չաման» թերթից էին, որը հովանավորվում է թուրքական իշխանությունների գլխավոր հակառակորդ Ֆեթհուլլահ Գյուլենի կողմից: Այդ թերթի լրագրողները, ճիշտ է, իրենց իշխանություններին քննադատում են, բայց կոնկրետ այստեղ գտնվողները չհամարձակվեցին գործածել «ցեղասպանություն» բառը: Ոչ թե չէին հավատում, որ կատարվածը ցեղասպանություն էր, այլ կարգապահ իրենց դրսևորեցին ինչ-ինչ նկատառումներով, որպեսզի չորակավորվեն որպես թշնամի: Բայց երկրի ներսում կա մեկ այլ՝ ավելի փոքր հավաքականություն, որը ոչ միայն Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման անհրաժեշտությունն է կարեւորում, այլեւ խոսում է հատուցումների մասին: Դա ինքնին կարեւոր փաստ է:

Այո, թուրքական պետությունը փորձում է տարբեր հնարքներով ցույց տալ, թե իբր գործընթաց կա, իշխանության կեցվածքը փոխվել է եւ այլն, բայց նրանց չի հաջողվում մինչեւ վերջ թաքցնել իրենց իսկական դիմագիծը: Կամս թե ականաբա քաղաքացիական պետության հակահայկական քաղաքականությունը: Հայերին

ներգրավելով պետական կառույցներում՝ թուրքական իշխանություններն ուզում են ինչ-որ տպավորություն ստեղծել: Իրականությունն այն է, որ այդ մարդիկ ընդամենը ազգությամբ հայ են, բայց իրենց ամբողջ եւությամբ թուրք մտավորականներ են հիշեցնում: Սա է իրողությունը, եւ ես սրա մեջ վատ բան չեմ տեսնում: Ինչ վերաբերում է մեջլիսի թեկնածուներին, ապա ոչ բոլորն են պետության կողմից առաջ քաշված: Օրինակ՝ Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցությունից առաջադրված են երկու հայ թեկնածուների թեկնածուներ (Թուրքիայում գործող կարգի համաձայն), եւ չնայած այդ կուսակցությունը քրդական Նախագիծ է իրենից ներկայացնում, բայց եւ այնպես, հույս ունի այս անգամ մտնել խորհրդարան՝ որպես թուրքական ծախ կուսակցություն: Դրա կողքին տեղ ունի մեկ այլ իրողություն. մեջլիսում իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության խմբակցության մեջ կան ավելի մեծ թվով քրդեր, ովքեր իրենց դավանած արժեհամակարգով հակադրվում են Ժողովուրդների ժո-

թույլ են ԵհսԿ-ում, բայց Եվրախորհրդարանում հայերի մասնակցությամբ Ադրբեջանին դատապարտող բանաձեռն են ընդունվում: ԵհսԿ-ն ընդամենը վարկազրկեց իրեն, որովհետեւ այստեղ ներկայացված են տարբեր պետություններից պատգամավորներ, որոնց կաշառելն այնքան էլ դժվար չէ: Մենք դա տեսանք Լույսիսկ Հուսաստանի դեպքում. այդ երկրի շահերի պաշտպանության քողի տակ կատարվեց միանգամայն այլ բան:

Պարզ է նաեւ, որ խոսքը գնում է միջազգային կառույցի մասին, եւ ինչքան էլ վարկաբեկված լինի այն, ունի արժեք, հետեւաբար, պետք է ավելի գործուն լինենք եւ բացահայտենք այդ ամենը:

Կարծում եմ՝ այս տարի Բաքվում կայանալիք Եվրոպական օլիմպիական խաղերն առիթ կտան Եվրոպական մի շարք ուժերի ուշադրությունը կենտրոնացնել Ադրբեջանում մարդու իրավունքների ոտնահարումներին: Իսկ դրանց բացահայտումը կնշանակի, որ Արցախի նկատմամբ Ադրբեջանի նկրտումները հիմնազուրկ են, եւ մարդիկ կույր պիտի լինեն, որ ասեն, թե հնարավոր է վերադարձ անցյալին: Անհրաժեշտ է միջազգային կառույցներում ավելի գործուն կերպով բացատրել Արցախի հիմնախնդիրը:

Վերջերս Երեւանում կայացած «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի չորրորդ լիագումար նիստի ժամանակ 33 ԱԺ պատգամավոր, 337 խմբակցությունը ներկայացնող Արծվիկ Մինասյանը ելույթ ունեցավ եւ ասաց՝ այդ ինչպե՞ս էր, որ Եվրախորհրդարանը ժամանակին իր աջակցությունն էր հայտնել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքին, ինչպե՞ս է ինքը՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը մեկնաբանել Անվտանգության խորհրդի բանաձեռնը՝ ասելով, որ այդ բանաձեռնով դարաբաղյան խնդրի լուծումը հանձնել են ԵԱՀԿ-ին, եւ դրանից ավելի անելիք չունեն: Փաստն այն է, որ Ադրբեջանը երկու տարի եղավ ՄԱԿ-ի ԱԿ-ի ոչ մշտական անդամ եւ չկարողացավ իրեն հուզող հարցերն օրակարգ բերել: Չկարողացավ, որովհետեւ, ինչպես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն է արտահայտվել, Ադրբեջանը, խեղաթյուրելով բանաձեռնը, ընդամենը խնդրի կարգավորման պարտականությունը հանձնում է ԵԱՀԿ-ին:

Ուզում եմ ասել, որ անհրաժեշտություն կա միջազգային հանրության եւ մասնավորապես քաղաքական գործիչների շրջանում լուսաբանել այս բոլոր իրողությունները՝ չընդհատելով մեր աշխատանքները:

Արցախի թեմայի հետ կապված՝ կուզենայի շեշտել կայանալիք խորհրդարանական ընտրությունների կարեւորությունն ու ժողովրդի լայն մասնակցության անհրաժեշտությունը: Ադրբեջանն այդ ուղղությամբ արդեն սկսել է սեւ քարոզչությունը եւ փորձում է ընտրությունները ճանաչելու հարցի շուրջ երկխոսության մեջ մտնել տարբեր պետությունների հետ:

Դա համարենք Ադրբեջանի գործը, իսկ մեր անելիքն այն է, որ այս ընտրություններն անցկացնենք փայլուն կերպով, որպեսզի արդյունքները համապատասխանեն ժողովրդի կամքին: Արցախցին վերստին պետք է ցույց տա, որ ինքն իր ազատ կամքի տերն է, եւ այդ կամքով էլ կերտում է իր ապագան ու ընտրում իշխանություններին:

### Մոռացված պատմություն, անպատիժ ոճրագործություններ

Շուշիում, Բաքվում եւ այլ բնակավայրերում կոմկաայան թաթարների կողմից 20-րդ դարի կզբին իրականացված շարդերը կարծես թե մոռացության տրվեցին: Խորհրդային Միության տարիներին սովետական պրոպագանդան ամեն ինչ արեց, որպեսզի պատմության էջերից ջնջի այդ ոճրագործությունը:

Յավոզ սրտի, մենք՝ հայերս, նույնպես լռում ենք՝ հաճախ մոռացության մատնելով: Այդ մասին հրապարակումների շատ քիչ կարելի է հանդիպել: Ի տարբերություն հայերի՝ ադրբեջանական եւ թուրքական մամուլը մեծ թափով, նամանավանդ վերջերս, մեծ քարոզարշավ են սկսել՝ արդեն իսկ հայտնի տեխնոլոգիաներով խեղաթյուրելով պատմությունը: Հենց Բաքվի եւ նույնիսկ Շուշիի հայերի շարդերը ներկայացնում են որպես «հայերի կողմից ադրբեջանցիների կոտորած»:

Սակայն դեռեւս պահպանվել են որոշակի փաստեր, որոնք վկայում են իրական դեպքերի մասին: Ներկայացնում եմ այդ փաստերից մի քանիսը:

Արտասահմանյան մամուլը եւ հատկապես ամերիկյան մամուլը լայնորեն անդրադարձել է 20-րդ դարասկզբին կոմկաայան թաթարների կողմից հայերի նկատմամբ իրականացված կոտորածներին:

Մեքերում ամերիկյան «The Christian Science Monitor» թերթից, որի 1915թ. օգոստոսի 5-ին լույս տեսած համարում գրված է. «Karabagh is inhabited exclusively by Armenians, and was formerly practically independent and self-governing» «Ղարաբաղը բնակեցված է բացառապես հայերով, եւ եղել է, փաստորեն, անկախ եւ ինքնակառավարվող...»:

Նույն պարբերականը 1919թ. օգոստոսի 28-ի համարում, անդրադառնալով Անդրկովկասում հայերի եւ թաթարների միջեւ հակամարտությանը, գրում է հետեւյալը.

«The cause of the trouble is said to be apparently political, due to the desire of Tartars to annex the Armenian province of Karabagh to the Tartar Republic of Azerbaijan. The information from Paris gives the following details: «it was on June 4 at 3 o'clock in the morning, that the Armed forces of the Tartar government of Azerbaijan directed by Dr Soultanoff, who had been imposed by force as governor of Armenian Karabagh, began the attack upon the city of Chouci, the capital of Karabagh»

«Խնդրի պատճառը, հավանաբար, քաղաքական է, որը կապված է հայկական Ղարաբաղ նահանգը թաթարական Ադրբեջան Հանրապետությանը բռնակցելու թաթարների ցանկության հետ: Փարիզից ստացված տեղեկատվությանը տալիս է հետեւյալ մանրամասները. «Ղա տեղի է ունեցել հունիսի 4-ին, առավոտյան ժամը 3-ին, երբ Ադրբեջանի թաթարական կառավարության զինված ուժերը, որոնք ղեկավարվում էին Սուլթանովի կողմից, որը ուժի միջոցով էլանակվել էր որպես հայկական Ղարաբաղի նահանգապետ, սկսեցին հարձակումը Ղարաբաղի մայրաքաղաք Շուշի քաղաքի վրա»:

Ինչպես տեսնում ենք, ամերիկյան հեղինակավոր «The Christian Science Monitor» պարբերականը Արցախը ներկայացնում է որպես հայկական նահանգ՝ բնակեցված բացառապես հայերով եւ ինքնակառավարվող: Սա, թերեւս, կարելու փաստարկ է պատմությունը խեղաթյուրելու փորձ անողների համար:

Յավոզ սրտի, Հայաստանում նույնպես կան փաստերից ու պատմությունից անտեղյակ մարդիկ, որոնք մինչ օրս մտածում

են, որ Արցախը հանդիսացել է Ադրբեջանի մաս: Եվս մեկ՝ թերեւս փոքրիկ, բայց կարելու հանգամանք. հողվածում Շուշի քաղաքը գրված է հայահնչյուն՝ Շուշի, այլ ոչ թե աղավաղված՝ Շուշա:

Բազում փաստեր կան նաեւ կոմկաայան թաթարների, այսինքն՝ ներկայիս ադրբեջանցիների կողմից հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների մասին:

Ամերիկյան հեղինակավոր «The New York Times» պարբերականի 1920թ. մայիսի 3-ին լույս տեսած թերթում հանդիպում ենք հետեւյալ վերնագրով հոդվածի. «Baku Armenians face extermination. Allied High Commissioners message tells of Azerbaidjan muslims crimes»: «Բաքվի հայերը կանգնած են ոչնչացման առաջ. դաշնակիցների բարձր հանձնաժողովականները հայտնում են ադրբեջանական մուսուլմանների հանցագործությունների մասին»:

Այնուհետեւ հոդվածում նշվում է ականատեսի վկայությունը գնացքում հայերի կոտորածի մասին.

«The Near East Relief guard on one train reports that Armenians were dragged from the train and butchered before his eyes.»

«Մերձավոր Արեւելքի Նպաստամատույց կազմակերպության ներկայացուցիչը հայտնում է, որ հայերը դուրս են բերվում գնացքներից եւ սպանվում իր աչքի առաջ»:

Այնուհետեւ հաղորդագրության հեղինակը տալիս է այդ իրավիճակի պատճառը եւ նշում, որ Բաքվի հայերը որեւէ առնչություն չունեն իրավիճակի սրման հետ. նրանք օրինավոր եւ խաղաղասեր բնակիչներ են:

«Բաքվում իրավիճակի սրման պատճառ է հանդիսանում հայերի եւ Ադրբեջանի միջեւ թշնամությունը լեռնային Ղարաբաղի համար, որը վիճելի տարածք է երկու երկրների միջեւ: Ես կարելու եմ գտնում, որպեսզի հայտնեմ հաղաղության կոնֆերանսին, որ հայ բնակչությունը Բաքվում կանգնած են բնաջնջման առջեւ, նաեւ այն, եւ որոնք չեն հանդիսանում երկու կառավարությունների միջեւ խնդրի մասնակից. խաղաղասեր են եւ օրինակալի»:

Ինչու՞ որոշեցի հենց այս հոդվածը մանրամասնորեն ներկայացնել: Պատճառն այն է, որ հոդվածում նկարագրվող 20-րդ դարասկզբի իրավիճակը շատ նման է 20-րդ դարավերջին տեղի ունեցածին: Արցախում սկսված արդարության շարժմանը Ադրբեջանը պատասխանեց հայերի կոտորածով Բաքվում, նույնը կրկնվեց 20-րդ դարավերջին Սոււմգայիթում, Բաքվում եւ այլուր:

Դեպքերի ձեռագիրը նույնպես նույնն է՝ մանր չինովիկներին տրված ամենաթողություն, ոստիկանության անտարբերություն եւ նույնիսկ մասնակցություն հայերի ունեցվածքի թալանին ու ոչնչացմանը, հայերի մասսայական կոտորածներին: Այդ, պատմությունը կրկնվեց եւ կրկնվեց նաեւ այն բանի համար, որ մենք մոռացության էինք մատնել անցյալը:

«The New York Times» պարբերականի մեկ այլ համարում հանդիպում ենք Ելիզավետպոլում կոմկաայան թաթարների կողմից հայ փախստականների գնացքի վրա հարձակման մասին հոդվածի, որտեղ նշված է.

«Five wagons filled with Armenian refugees from Shushi were attacked by Tatars. Most of the refugees were killed and women were carried off. Similar outrage are occurring in various districts»

«Հինգ վագոն, լցված հայ փախստականներով, Շուշիից հարձակման է ենթարկվել թաթարների կողմից: Փախստականների մեծ մասը սպանվել են, կանայք առեւանգվել են: Նման զագանություններ տեղի են ու-

նենում տարբեր շրջաններում»:

Վերը նշվածը վկայում է այն մասին, որ հայերը զանգվածային կոտորածների էին ենթարկվում կոմկաայան թաթարների կողմից ոչ միայն արցախյան Շուշիում կամ Բաքվում, այլեւ Ադրբեջանի տարբեր շրջաններում:

Ամերիկյան մամուլի պահոցում կարելի է գտնել շատ հոդվածներ Արցախում ու նրա շրջակայքում կոմկաայան թաթարների կողմից հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունների մասին: Հատկապես ուշագրավ է հետեւյալ հոդվածը. «The New York Times» պարբերականի 1919թ. սեպտեմբերի 4-ի համարում լույս է տեսել մի հոդված, որը պատմում է Շուշիի շարդերի եւ վիրավորներին չլքելու ամերիկացի բուժքույրերի վճռականության մասին: «Բուժքույրերը կպած մտում են իրենց գործին» վերնագրով հոդվածում նշվում է ամերիկյան երկու բուժքույրերի մասին, ովքեր, անտեսելով իրենց կյանքին սպառնացող վտանգը, նախընտրեցին մնալ Շուշիում եւ օգնել վիրավոր հայերին.

«Two American nurses Miss Margaret Mark of Hillburn N.Y. and Miss Ruth Stuart of New York City working for American Commission for Relief in the Near East, declined to abandon-shushifacts the sick and wounded in Shusha, Armenia, after having survived massacre by Tatars of 700 Christian inhabitants of the town, according to letter just received here.»

«Երկու ամերիկացի բուժքույրեր՝ միսս Մարգարետ Մաքը Հիլբուրնից եւ միսս Ռութ Ստյուարտը Նյու Յորքից, ովքեր աշխատում էին Մերձավոր արեւելքի օգնության ամերիկյան հանձնաժողովում, հրաժարվել են լքել Հայաստանի Շուշի քաղաքի վիրավորներին, որոնք ողջ են մնացել թաթարների կողմից իրականացված կոտորածից հետո, որին զոհ է գնացել 700 քրիստոնյա: Այդ մասին հաղորդվում է հենց նոր ստացված նամակում»:

«Նյու Յորք Թայմսի» այս հոդվածը ոչ միայն փաստում է Ադրբեջանի թաթարների կողմից Շուշիի հայերի կոտորածների մասին, այլեւ պայացույց է, որ այդ կոտորածները ոչ միայն մեկ կամ մի քանի օր են եղել, այլեւ պարբերական բնույթ են կրել, որն իր գագաթնակետին է հասել 1920թ. մարտին, երբ Շուշիում կոտորվեցին տասնյակ հազարավոր հայեր:

Հայերի զանգվածային շարդեր տեղի են ունեցել ոչ միայն Շուշիում, այլեւ քաղաքի մոտ գյուղերում: Այդ մասին նույնպես կարելի է կարդալ 1919թ. լույս տեսած ամերիկյան մամուլի էջերում.

«Ինչեւէ, վայրագությունների նոր ալիք է սկսվել Շուշիին հարակից հայաբնակ գյուղերում: Հունիսի կեսին լավ զինված, 2000 հոգուց բաղկացած խմբավորում, որին առաջնորդում էր Սուլթանովի եղբայրը, հարձակվել է մեծ Ղայբալիշեն հայկական գյուղի վրա, որը գտնվում է հենց Շուշիի մոտ, թալանել եւ վառել են այն. մոտավորապես 600 հայեր սպանվել են»,- գրված է ամերիկյան մամուլում տպագրված հոդվածներից մեկում:

Կոմկաայան թաթարների կողմից հայկական գյուղերի վրա հարձակումներին է անդրադարձել նաեւ ռուսալեզու «Кавказское слово» պարբերականը.

«4-5 июня 1919 г. в Шуше и её окрестностях произошли столкновения между армянами, курдами и азербайджанцами. Курдскими и азербайджанскими кочевниками под предводительством брата генерал-губернатора Султанова было вырезано армянское селение Гаубалу. Жители других армянских селений, подвергшихся нападению, организовались и дали отпор. По

данным представителя британской военной миссии, из 700 жителей селения Каубаликенд в живых осталось лишь 11 мужчин и 87 женщин и детей. После этих событий Хосров-бек Султанов установил блокаду армянской части г. Шуша.»

«1919 թ. հունիսի 4-5-ը Շուշիում եւ նրա շրջակայքում տեղի են ունեցել բախումներ ադրբեջանցիների, քրդերի եւ հայերի միջեւ: Քուրդ եւ ադրբեջանցի քոչվորներին առաջնորդող նահանգապետ Սուլթանովի եղբոր կողմից կոտորվեցին հայկական Ղայբալի գյուղի բնակիչները: Հարձակման ենթարկված այլ հայկական գյուղերի բնակիչները կազմակերպել են ինքնապաշտպանություն, եւ հարձակումները հետ են մղել: Ըստ Բրիտանական ռազմական առաքելության ներկայացուցչի՝ Ղայբալիքենո (Գայլատուն) գյուղի 700 բնակիչները կենդանի են մնացել միայն 11 տղամարդ եւ 87 կին եւ երեխա: Այդ դեպքերից հետո Սուլթանովը շրջափակել է Շուշիի հայկական թաղամասը»:

Այսպիսով, հստակ երեւում է, որ 20-րդ դարասկզբին Ադրբեջանի թաթարների կողմից հայերի զանգվածային շարդեր կազմակերպվել են ոչ միայն Շուշիում, այլեւ Արցախի տարբեր վայրերում:

Շուշիի կոտորածը հետեւյալ կերպ է բնութագրել կոմունիստական կուսակցության հայտնի գործիչ Սերգո Օրջնիկիձեն, ով 1920թ. գլխավորել է ԼԿ ԿԿՊ (6) (Խորհրդային Միության բարձրագույն ղեկավար մարմին) Կոմկաայան բյուրոն.

«Այսօր ես սարսափով եմ հիշում այն տեսարանը, որը մենք տեսանք 1920թ. մայիսին Շուշիում: Գեղեցիկ հայկական քաղաքը հիմնովին ավերվել, թալանվել էր, իսկ ջրհորներում մենք տեսանք կանանց եւ երեխաների դիակներ»:

Ադրբեջանցի կոմունիստական կուսակցության գործիչ Մուսաեւը այսպես է բնութագրել 1920թ. մարտին Շուշիում տեղի ունեցածը.

«Անխնա ոչնչացում անպաշտպան կանանց, երեխաների ու ծերերի: Հայերը ենթարկվել են մասսայական կոտորածի: Մի րոն հայ աղջիկները բռնաբարվում էին, այնուհետեւ գնդակահարվում: Խոսրով-բեկ Սուլթանովի հրամանով շարդերը շարունակվեցին վեց օր, հայկական մասի տները թալանվեցին եւ վերածվեցին մոխրի: Այդ դեպքերի ընթացքում Խոսրով-բեկ Սուլթանովը մուսուլմաններին ասում էր «սուրբ պատերազմի» (Ձիհադի) մասին եւ կոչ էր անում նրանց վերջ տալ Շուշի քաղաքի հայերին՝ չխնայելով կանանց եւ երեխաներին»:

Ադրբեջանի թաթարների կողմից 20-րդ դարասկզբին հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների մասին կան շատ փաստեր, սակայն, չգիտես ինչու, պատմությունը լուռ էր ու անտեսում էր այդ ողբերգությունները: Յավոզ սրտի, մեր ժողովրդի պատմության գրեթե յուրաքանչյուր օրը կապված է ողբերգության հետ, սակայն չպետք է լռել ու անտեսել այն, մանավանդ, երբ ոճրագործները փորձում են խեղաթյուրել տեղի ունեցածը եւ իրենց վայրագությունները ոչ միայն արդարացնում են, այլեւ դրանք վերագրում են այդ վայրագությունների զոհերին:

Իսկ վերջում ուղղակի թվային ապացույց. 1883թ. մարդահամարի տվյալներով՝ Շուշիի բնակչությունը կազմում էր 25656 մարդ, որի 57% հայեր էին, 43%-ը՝ կոմկաայան թաթարներ, իսկ 3%-ը՝ ռուսներ եւ հրեաներ: 1930թ. Շուշիում բնակվում էր ընդամենը 300 հայ:

### Եռագույնի նվիրյալը /Ծննդյան 56-ամյակի կապակցությամբ/

Կան մարդիկ, որոնց անուններն արդեն իսկ պատմություն են՝ կտակված գալիքին, հավերժությանը: Նման մարդիկ, առհասարակ, համեստ են իրենց կերպարով ու ապրած կյանքով: Այդպիսիներն ազգի հպարտանքն են...

Թելման Հարությունյան. արցախցուն հատուկ ու արցախցուն վայել արիության մարմնացում: Էությանը համեստ այս մարդու մասին խոսելիս միաժամանակ ձգտում են նրա կատարածի արժեքներն ու օրինակելի կերպարի նկարագրման մեջ լինել համեստ: Համեստությունը նրա մեծագույն հարստությունն էր:

Թելման Հարությունյան անունը շատերին հիշեցնում է Արցախյան շարժման ծլարձակումը, ավելի հստակ՝ 1988-ի հունիսի 21-ը, երբ առաջին անգամ «Միացում» գոչող ամբոխի աչքի առաջ երիտասարդը հանելուկային կերպով հայտնվեց Մարզգործկոմի շենքին ու կայծակնային արագությամբ դեն նետեց ադրբեջանական դրոշմը՝ փոխարենը դնելով հայկական Եռագույնը: Ականատես մարդկանց մե՛րթ հիացական, մե՛րթ զարմացական, մե՛րթ վախեցած ձայները հարցնում էին՝ ո՞վ է, հա՞յ է, ինչպե՞ս բարձրացավ... Ոմանք քարացած ծափահարում էին, ու թվում էր՝ դեն նետված դրոշի հետ դեն էին շարտվել 70 տարիների արցախցու համբերության ու բռնության շղթաները:

Այդ համարձակ քայլից 20 տարի անց նա մի օր պիտի անկեղծանար. «Մարզգործկոմի շենքին կից դպրոց կար, որտեղով բարձրացել եմ տանիք: Գաղտնագողի սողալով տանիքի վրայով՝ մոտեցել եմ դրոշին, ապա պատռելով՝ հանել այն, շարտել՝ տեղում ամրացնելով Եռագույնը: Դեռ չէի հասցրել հեռանալ, երբ 8-9 խորհրդային զինվոր բարձրացան տանիք, փորձեցին բռնել, սակայն՝ չկարողացան, հասցրի փախչել եկածս ճանապարհով...»: Դրոշը բարձրացնելու եւ փախուստի պահերը խորհրդային ՊԱԿ-ը հասցրել էր լուսանկարել: Կնոջ՝ տիկին Սվետայի պլանում պահվում էն պատմական պահն արձանագրող երկու լուսանկարներ, որոնք նրան էին հանձնել ամուսնու դատավարությունից հետո: Դատավորը դրանք մեկնել է տիկնոջն ու ասել. «Վերցրեք սրանք. այս լուսանկարները պատմություն են, սերունդներին պետք կան...»:

Նրան ուժ էր տալիս մի պայծառ նպատակ, որը միայն իրենը չէր, այլ բոլորինը, ժողովրդինը: Նրա նպատակը նահանջ չէր

ճանաչում, ուստի դեպքին հաջորդած հետապնդումներն ու ձեռնարկությունները, ապա եւ դատավարությունը՝ թեւեւ առողջապես կոտրեցին նրան, սակայն հոգով մնաց հաղթող՝ Արցախի լուսավոր ազատությունը տեսնելու վճռականությամբ զինված:

Ամուսնու մասին խոսելիս տիկին Սվետան զսպում է հուզմունքը, հիշում՝ ամուսինը պատգամել էր երբեք տուրք չտալ արցունքներին, թեւաթափ չլինել, չընկրկել ճակատագրի առաջ:

«Թելմանն այն հերոսներից է, ովքեր



1988թ. ԱՐԱՋԻՆ ԱՆՉԱՍ ԱՐՅԱՆՈՒՄ ԹԵԼՄԱՆ ՖՐԵՅԴՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ԵՈՒՎՈՒՅՆԸ ՏԵՂԱԳՐԵԼ Է ՄԱՐԶԿՈՄԻ ՇԵՆՔԻ ԿՏՈՒՐԻՆ:

կարիք չունեն ավելորդ երանգավորումներ: Նա համեստությամբ ապրել է մեր կողքին՝ իր ուրույն ներդրումն ունենալով Արցախյան ազգային-ազատագրական շարժման գործում: 1988-ի հունիսի 21-ի նրա արարքը պատմական իրադարձություն էր: Նման «հանդգնություն» այդ ժամանակ շատ քչերին էր հատուկ, բայց Թելմանը դա կատարեց՝ հասկանալով, թե ինչ հետեւանքներ դա կունենա», - մի առիթով պատմել է Արցախյան շարժման մասնակից, Թելմանի մտերիմ ընկեր Աշոտ Սարգսյանը:

Իսկ Շարժման ակունքներում կանգնած մեկ այլ ակտիվիստ՝ Արկադի Կարապետյանը, նրա մասին ասել է. «Ժողովրդի սրտում մեծ հնչեղություն ունեցավ այդ քայլը, քանզի դա պայքարի մի նոր լիցք, մի նոր թափ հաղորդեց ազատություն տենչող մարդկանց»:

1990 թվականից Թելմանն անդամագրվեց Հայ Յեղափոխական Դաշնակցության

նը՝ երդում տալով ՀՀԿ Կանոնագրին ու Ծրագրին՝ պատվով ու նվիրումով ծառայելու իրեն ծնած ազգին ու հայրենիքին: Ու նա քայլեց այդ իսկ ճանապարհով՝ հավատարիմ մնալով որդեգրած գաղափարին:

«Երբ ասում են գաղափարի մարտիկ, մի քանի մարդկանց դեմքեր են գծագրվում աչքիս, որոնցից մեկը Թելմանն է, որն իր փոքր հասակին, իր փոքր մարմնին ի հակակշիռ՝ գաղափարի մարտիկ էր բառիս բուն իմաստով», - ասում է Թելմանին ճանաչած, Շարժման ու պատերազմի մասնակից, բանաստեղծ, լրագրող Արմեն Դա-



նիելյանը, ապա ավելացնում, որ որեւէ հոգեբանական իրավիճակում, երբ մարդկանց մի հատված ընկճվում էր, նա երբեք չէր ընկճվում, ոգեպես ուժեղ էր, քան՝ շատ-շատերը, ովքեր ֆիզիկապես ուժեղ էին երևում: Նա ոգու մարմնացում էր:

Թելման Հարությունյան անունը միայն մեկ արարքով, մեկ խիզախությամբ չէ, որ նշանավորվում է: Նրա կյանքն ու կենսագրությունը մի ամբողջ հայրենասիրական դաս է, որն այդպես էլ դրոշմվեց նրան ճանաչած մարդկանց սրտերում ու հիշողություններում, իսկ նոր սերունդը շատ բան ունի նրանից ընդօրինակելու:

1992 թվականին Թելմանը, ԼՀԿ Պաշտպանության պետական կոմիտեի իրամաճով նշանակվել էր Սեյսուլան, Յարմջա, Դազանչի գյուղերի լիազոր ներկայացուցիչ:

Պատերազմից հետո էլ նա մնաց մարտիկ, իր ժողովրդի բարօրության ու հայրենիքի բարգավաճման համար պայքարող

մարտիկ: Երկար տարիներ աշխատելով ԼՀԿ վերաբնակեցման վարչությունում, ինչպես պատմում են նրա աշխատանքային կոլեկտիվում՝ շանք ու եռանդ չէր ինչպես իր հնարավոր ներդրումն ունենալու Արցախի վերաբնակեցման գործում, թեւեւ այդ տարիներին բժիշկները նրա մոտ մահացու հիվանդություն էին հայտնաբերել: Նրան հանգիստ եւ անդորր էր հարկավոր, սակայն նա ժամանակ էր գտնում այցելելու արցախյան գյուղերը, ծանոթանալու մարդկանց մտահոգող խնդիրներին, ներկայացնելու դրանք, իր ավանդն ունենալու դրանց հաղթահարման աշխատանքներում:

Ընդամենը 49 տարիների կյանք էր նրան վիճակված, սակայն նրա ապրած կարճ կյանքը լոկ տարիների հանրագումար չէր. նա կարողացավ բովանդակալից ապրել Աստուծո պարգեւած յուրաքանչյուր օրը՝ մարդկանց հետ, մարդկանց կողքին միշտ մարդ մնալով: Հետաքրքիր, բարությանը փայլող այս մարդը հստակ գիտակցում էր ճակատագրի՝ իր հանդեպ դաժան խաղը, գիտեր՝ կյանքի վախճանը չի ուշանալու, սակայն ճակատագիրն անգամ անկարող էր կոտրել խիզախին: Նա համառորեն ոտքի էր ելնում, աշխատում, գործում՝ արհամարհելով մարմնը կեղեքող հիվանդությունը:

«Մայր հողի հանդեպ սերը նա սերմանել է նաեւ զավակների մեջ: Պարտավորեցնում էր, որ դառնան հայրենիքի համար պիտանի մարդ, բարձրագույն կրթություն ստանան ռազմական բուհերում եւ լավ տիրապետեն մարտական գործին, քանզի հայի համար պատերազմները շարունակվում են անգամ խաղաղության ժամանակ...», - պատմում է տիկին Սվետան, նշում, որ որդիները հոր պատգամներով են կյանքում առաջնորդվում, հիշում նրա յուրաքանչյուր խոսքն ու խրատը: Արդեն գիտեն, թե ինչը կողջուներ հայրը եւ ինչը կհանդիմաներ:

Իր՝ համարյա բոլոր լուսանկարներում ընկեր Թելմանը ժպտում է՝ աչքերում ունենալով բարության այն լույսը, որ շռայլում էր ծանոթ-անծանոթին: Այդպիսին էլ նա մնաց հարազատների, ընկերների ու բոլոր նրանց հիշողություններում, ովքեր բախտ են ունեցել ճանաչելու Թելման Հարությունյան անունով արցախցուն, որի կյանքը նվիրվում էր իր ազգին ու գաղափարին:

Հերմինե ՍՎԱԳՅԱՆ

### Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պուրակի բացում Բերձորում

Մարտի 29-ին բազմամարդ էր Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցու հարակից տարածքը, որտեղ Երեւանի պետական համալսարանի ղեկավար կազմը, 100 ուսանողներ, Արցախի Զաշաթաղի շրջվարչակազմի ու Բերձորում գործող տարբեր կառույցների աշխատակիցներ՝ շրջվարչակազմի ղեկավար Ս. Խաչատրյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ Արցախի պետական համալսարանի ուսանողներ ու դասախոսներ համատեղ ուժերով տնկեցին 100 ծառ: Միջոցառմանը ներկա էին ԼՀԿ Նախագահ Բակո Սահակյանը, փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, կրթության եւ գիտության նախարար Սլավա Ասրյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշակ Մինասյանը, Շուշիի շրջվարչակազմի ղեկավար Վլադիմիր Կասյանը, այլ պաշտոնատար անձինք: ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, մինչեւ ծառատունկը սկսելը, դիմեց ներկաներին:

«Տարին 2 անգամ համալսարանականներն այցելում են Բերձոր, Արցախի տարբեր վայրեր եւ իրականացնում ծառատունկ: Այս տարվանը խորհրդանշական

է՝ նվիրված է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: ԵՊՀ-ի՝ Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում Արցախի այցելելը եւ ծառատունկ կատարելը պարտավորություն է: Այստեղ տնկելու ենք 60 նոճի, որ բերվել է Իրանից հատուկ այս նպատակով, եւ 40 եղևնի: Բացի այդ, եւս 100 ծառ՝ ընկուզենի, սալորենի ու կեռասենի կտնկվի»:

Այնուհետեւ ԼՀԿ նախագահը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը եւ արեւելագիտության ֆակուլտետի ղեկան Գուրգեն Մելիքյանը բացեցին հուշաքարը, որի վրա հայերեն եւ անգլերեն գրված է. «Հայոց Մեծ եղեռնի զոհերին նվիրված այգի. հիմնել է Երեւանի պետական համալսարանը 2015թ. ապրիլին»: Յուրաքանչյուր ծառատունկ Գ. Մելիքյանը սկսում է կարմիր գիւնի ըմպելով եւ օտարագիր հայագի գրող-բանաստեղծ Լեւոն-Չավեն Սուրմելյանի «Ասացվածք՝ ծառ տնկելու առթիվ» բանաստեղծությամբ:

Այս անգամ էլ օրինաչափությունը չխախտվեց: Առաջին ծառը տնկեց ԼՀԿ Նախագահը: Այնուհետեւ ուսանողներն ու

ավագներն անցան գործի, եւ մոտ մեկ ժամ անց հայրուր տնկիներ հանձնվեցին մայր հողին: Հիմնվեց եւս մեկ այգի-պուրակ, որի երկնապագ ծառերը, ինչպես նշեցին Ա. Սիմոնյանն ու Գ. Մելիքյանը, խորհրդանշելու են հայի հարատևությունը եւ ազատագրված տարածքի շենսցումը: ԵՊՀ տարբեր ֆակուլտետներից 6 ուսանողներ՝ Ժելյա Նաչարյանը, Տարբեիկ Գաբրիելյանը, Գայանե Հովհաննիսյանը, Գեղամ Ասատրյանը, Նենե Օհանյանը եւ Նուրե Դավթյանը, միասին էին տնկիները հողին պահ տալիս՝ հավատով, որ իրենց տնկած ծառը երկար տարիներ զարդարելու է տարածքի մի մասը:

Իրենց տնկած առաջին ծառը, որը հուշաքարի ուղղությամբ չորրորդն է, անվանեցին «Զառախորան»: 1-3-րդ կուրսեցում են ուսանում. ասացին՝ առաջին անգամ են այցելում Արցախ եւ հիացած են Հայոց երկրի այս տարածքով: ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկան Էդիկ Մինասյանը տեղեկացրեց, որ իր ղեկավարած ֆակուլտետից 12 ուսանող են մասնակցում ծառատունկին՝ ուրախությամբ

հավելելով, որ բոլորն էլ ցանկություն են հայտնում նորից այցելել Արցախ: Գուրգեն Մելիքյանը կարեւորեց Զաշաթաղի դերը Արցախի կայացման գործում եւ որպես կապող օղակ Մայր հայրենիքի հետ: Նշեց նաեւ այն, որ քաշաթաղցիներն այսօր նաեւ հայրենի սահմանն են պաշտպանում: Խոսեց մարտի 19-ին հերոսաբար մարտնչած եւ մարտիրոսված Հակոբ Խաչատրյանի մասին՝ ասելով, որ այսօրվա տնկիներից մեկը նվիրված է Հակոբի հիշատակին. այդ ծառի մոտ նրա հիշատակին խաչքար կկանգնեցվի: Հիշեցրեց, որ Հակոբի հայրը՝ Գագիկը, իր միակ որդու հուղարկավորությունը կատարեց Զաշաթաղի՝ Աղածոր գյուղում, որ արմատներով կապվի այս հողին, ինչպես նորատունկ նոճիները: Ասաց նաեւ, որ ծառատունկի գաղափարն սկսել է իրականացնել 1960-ական թվականներից:

Եվս մեկ գեղեցիկ ու հիշարժան օր կայացավ Բերձորում, որի ազատագրումով իրականացավ մեր ժողովրդի երազանքը՝ միացումը:

Չոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

### Պատերազմի գույները

Մանկությունիցս համարյա ոչինչ չեմ հիշում. պատերազմից մթազնել են հիշողություններս: Գու՛ցե կմտածեք, որ դա լավ է: Չէ որ՝ եթե հիշեմ, ապա պիտի հիշեմ պայթյունների, լաց ու կոծի, նկուղներում ծվարած մայրերի ու երեխաների, արցունքն աչքերին սառած ծերերի եւ համատարած սպասող հայացքների մասին: Գուցե եւ, բայց չէ՞ որ այդ ամենն իմն է, ես եմ ապրել, դա իմ կյանքի պատմության մի մասնիկն է, որ կոչվում է մի վիստ բառով՝ մանկություն: Եթե չես հիշում մանկությունդ, ուրեմն կիսատ ես ապրել կյանքդ... Ինչ-որ մեկը գողացավ իմ եւ ինձ նմանների մանկությունը, եւ ես ու ինձ նմանները ստիպված եղանք շուտ մեծանալ...

Հուշերս արթնանում են պատերազմից հետո միայն, ասես՝ լոկ պատերազմից հետո եմ ապրել մանկությունս: Պատերազմից հետո ամենապայծառ բանը, որ հիշում եմ՝ Նրա դեմքն է՝ լուսավոր ինչպես Աստվածամայրը: Այո, նա հենց այդպիսին է՝ մաքուր ու լի բարությունով:

Այսօրվա պես հիշում եմ՝ 1995 թվականի ամառն էր, երբ Նա եկավ: Հագին երկար զգեստ էր, դեմքին՝ արեւ: Հագիվ 25-26 տարեկան էր: Մի քիչ թմբկիկ արտաքինով:

- Անունս Ծիա է, Ծիա Վարդապետյան, այսուհետ ձեր տանն եմ մնալու, կընդունե՞ս ինձ, փոքրիկ:

Ես ամոթխած թաքնվեցի մայրիկիս փեշի տակ: Նա ծիծաղեց: Ես սկսեցի մայրիկիս փեշի տակից գննել նրան: Նրա երկար, հասարակ, մուգ կապույտ զգեստը գրավեց ուշադրությունս: Մի պահ հիշեցի մորս շորերը, նիհար կազմվածքը: «Ուզում եմ, որ այդ շորից մայրիկիս էլ լինի», - անցավ մտքով ու սկսեցի նայել նրա պայուսակին, սեւ, հարդարված մագերին, թեթեւ շրթներկին: «Ինչու՞ մայրիկս այդպիսի զգեստ չունի, ինչու՞ շրթներկ չի քսում...», - մտածում էի, երբ նա նորից խոսեց.

- Ես հեռու տեղից եմ եկել, - ասաց ու պայուսակից մի քանի տուփ կոնֆետներ հանեց, - քեզ համար է, վերցրո՛ւ:

- Մամ, սա ի՞նչ է, - կամաց հարցրի մայրիկից:

Մորս դեմքին ցավոտ ժպիտ երեւաց: Բայց նա տուրք չտվեց ցավին:

- Զաղոցավենիք է, վերցրո՛ւ եւ շնորհակալություն ասա օրիորդ Ծիային:

Ես երկար նայեցի նրա պարզած ձեռքին ու մնացի իմ տեղում. «Մայրիկս իսկական կոնֆետներ է պատրաստում փայլաթղթի մեջ, ես այդպիսինը չեմ ուզում, դրանք իսկական չեն»: Ծիայի աչքերից մի քանի արցունք կաթեց. նա ներողություն խնդրեց ու սրբեց աչքերը: Ես զարմացա ու մտածեցի, որ երեւի նեղացավ ինձնից: Հետո նա կոնֆետները դրեց սեղանին

եւ վարորդին պատվիրեց, որ ներս բերի ճամպրուկները:

Այսպես Ծիան հայտնվեց մեր ընտանիքում...

Մի օր նա հավաքեց բակի բոլոր երեխաներին եւ կոնֆետներ ու խաղալիքներ բաժանեց: Բոլորս հիացած էինք ոչ այնքան անծանոթ քաղցրավենիքով, որքան՝ նրանց գույներով: Հետո Ծիան բացեց խաղալիքների տոպրակը, բաժանեց մեզ: Հանկարծ մեկը գոչեց. «Ես խաղալիք ավտոմատ եմ ուզում, հաջորդ անգամ ինձ կբերե՞ս դրանից»:

- Ի՞նչ ես անում խաղալիք ավտոմատը, - հարցրեց Ծիան:



- Ո՞նց թե ի՞նչ ես անում, բա առանց ավտոմատի ի՞նչ խաղ:

- Իսկ ի՞նչ խաղ ես խաղում ավտոմատով:

- Մարդ եմ սպանում, թուրքեր եմ սպանում, շատ թուրքեր: Դու գիտե՞ս թուրքն ինչ է: Թուրքը շատ վատ բան է, նրան պետք է սպանել, թե չէ ինքը կգա ու մեզ կսպանի: Այ, տե՛ս, Դավիթի պապային թուրքն է սպանել, Կարենի հոպարին էլ է թուրքը սպանել, մեր հարեան Մարգո տատին ամեն օր լացում է ու ասում՝ թաղեմ թուրքի բալան, որ իմ բալան տարավ ինձնից... Թուրքը վատ բան է...:

Ծիան ոչինչ չպատասպանեց, դեմքով շրջվեց դեպի բակի ընկուզենին ու աչքերն առավ ձեռքերի մեջ: Հետո խաչակնքեց մի քանի անգամ...

- Դու պետք է ուրիշ խաղալիքներով խաղաս, այ սրանցով, տղա՛ս, սրանք լավ խաղալիքներ են, իսկ ավտոմատը լավ խաղալիք չէ, դու միայն լավ խաղալիքներով խաղա ու վատ մարդկանց մասին մի մտածիր... Կուզե՞ս ես քեզ «Արջուկի ու պաղպաղակի» հեքիաթը պատմեմ: Շատ դուրդ կգա:

- Իսկ պաղպաղակն ի՞նչ է:

- Պաղ-պաղ... պաղպաղակը... վաղը մենք միասին պաղպաղակ կպատրաստենք, կուզե՞ք:

- Հա՛...հա՛...հա՛..., ուզում ենք, - ինչեց ամեն կողմից:

Հաջորդ օրը մեկը կաթ բերեց իրենց տնից, մյուսը՝ շաքար, մեկը՝ միրգ, եւ փոքրիկ բաժակների մեջ պաղպաղակ պատրաստեցինք: Այդ հարցում բոլորիս օգնեց մայրս: Մի քանի ժամից պաղպաղակ կերանք... Պա՛ղ-պա՛ղակ... ի՞նչ համով բան է...:

Ծիան լուսանկարչական ապարատ էր բերել եւ լուսանկարում էր: Մենք էլ պարտադիր ժպտում էինք: «Չի՛զգգ», - ասում էր Ծիան:



Մենք էլ հետեւից կրկնում էինք՝ չի՛հ՛զգգ... Ամեն ինչ նորություն էր...

Ծիան մեկ տարի մնաց մեր տանը: Ուներ իր առանձին սենյակը, իր սիրելի անկյունը, բակում իր սիրած տեղը: Դպրոցում անգլերեն էր դասավանդում: Անգլերենը խորթ էր բոլորին: Ուսուցիչներն էլ էին մասնակցում դասերին: Ծիան իր աշխատավարձը չէր ստանում, տրամադրում էր դպրոցի կարիքները հոգալուն:

Հետո նա սկսեց ազգային երգ ու պար սովորեցնել աշակերտներին: Բոլորը կլանված լսում էին նրա խոսքը, կլանում նրա ձայնը, շարժումները: Առաջին անգամ նա մեզ սովորեցրեց «Գինի լից», «Սերոբի ու Սոսի երգը», «Գեորգ Չաուշի երգը»... Պատմում էր ամեն մի երգի հերոսի մասին...

Ծիան մի օր մեզ պատմեց Համբիկ Սասունյանի ու նրա ցմախ բանտարկության մասին: Ես փոքր էի, շատ բան չէի հասկանում, իսկ մեծերը հասկանում էին: Նույնիսկ մի քանի հոգի լաց եղան, հետո ցանկություն հայտնեցին նամակ գրել Համբիկին: Նամակների մի ամբողջ կույտ հավաքվեց: Ծիան մեկ տարի անց

դրանք իր հետ տարավ Ամերիկա, հանձնեց Համբիկին, ուղարկեց պատասխան նամակները՝ գրված Համբիկի ձեռքով...

Մի օր՝ Չատիկ տոնին, նա հարցրեց.

- Իսկ դուք Չատիկը ո՞նց եք նշում:

- Իսկ Չատիկն ի՞նչ է, - հարցրինք...

Նրա հետ առաջին անգամ Չատիկ նշեցինք, ձու ներկեցինք, գատակական խաղեր խաղացինք:

- Ինչ լավ բան է այս Չատիկը, - ասաց մեր բակի Լիլիթը, - ափսոս, որ շուտ չենք իմացել, թե չէ ինչքա՛ն ձու կներկեցինք...

Ես երբեք չեմ մոռանա Ծիայի ժպիտը: Նրա ժպիտում այնքան թախիծ կար. հիմա եմ հասկանում նրա հոգու խռովքը: Նա իր կամքով հայտնվել էր մի տեղ, որտեղ իրար էին խառնվել վիրավոր ճակատագրերը, մանուկների՝ այդպես էլ չմանկացած մանկությունները, պատերազմի միտղ վերքերը: Այդ ամենի մեջ Ծիան եւ հարազատ քույր էր, եւ ընկերուհի, եւ խորհրդատու, եւ հոգեբան, եւ ուսուցիչ... Ծիան մեր գյուղի արեւն էր...

Ծիան վայրի վարդեր շատ էր սիրում: Երբ դպրոցից տուն էր գալիս, վայրի վարդերի մեծ փնջի տակից դեմքի կեսը չէր երեւում: Ամեն մեկն ուզում էր ինքը անտառից Ծիայի սիրած ծաղիկները բերեր: Հաճախ երեխաները վիճում էին, թե ով է առաջինը նրան ծաղիկ նվիրելու: Հետո հերթ էին դնում... Այսօր՝ ես, վաղը՝ դու, հաջորդ օրը՝ մեկ ուրիշը: Անտառի բոլոր վայրի վարդերը նրան էին... Շատ հաճախ նա ուրախությունից լաց էր լինում: Բոլորը վազում ու գրկում էին նրան... «Այսքան երիտասարդ տարիքում ես կարողացա ամենաերջանիկ մարդը դառնալ», - ասում էր Ծիան:

Մեկ տարի անց եկավ հրաժեշտի պահը: Ծիան պիտի մեկնեւ Ամերիկա, ընտանիքը սպասում էր: Նա ճամպրուկները ձեռքին չվարած կանգնել էր, արցունքները հոսում էին: Գյուղացիներից ամեն մեկը մի բան էր բերել նրա համար՝ դոշաք, մուրաբա, չիր-չամիչ, անգամ՝ ձու եւ կաթնամթերք...

Ծիան հազար ու մի թելով կապվեց մեր գյուղին, մենք էլ՝ նրան: Դա է պատճառը, որ նա ամեն տարի ամռանն այցելում է՝ թեկուզ մեկ-երկու օրով:

Ծիան հայրենիքից իր հետ նույն շիվեր տարավ. «Ամերիկայում կտնկեմ. փոքրիկ հոդամաս ունենք»:

Մի օր պապս հարցրեց նրան.

- Հը, նռենին ծաղկե՞ց, բե՛րք տվեց...

- Ո՛հ, պապի, թեպետ չչորացավ, բայց չծաղկեց...

- Ամեն ծառ իր հայրենիքն ունի, աղջկա... Ամեն ծառ իր հայրենիքում է ծաղկում...

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

### 1915-ի նորվեգացի մոռացված հերոսը

«Ակոս» շաբաթաթերթին անդրադարձել է Նորվեգիայի վարչապետ Էռնա Սոլբերգի որոշմանը՝ ապրիլի 24-ին չայցելել Երեւան՝ հարգելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Հայկական լրատվամիջոցը բերել է Բողի Կատարինե Բյորնի օրինակը, որը Ցեղասպանության ակնադատներից է եւ հայտնի իր հասարակական գործունեությամբ:

«1915-ի նորվեգացի մոռացված հերոսը» հոդվածում ներկայացվում է Նորվեգացի կնոջ կյանքը, որը Ցեղասպանության տարիներին ապրել է Արեւմտյան Հայաստանում, տարիներ շարունակ օգնել հայերին:

«Բյորնը ծնվել է 1871 թվականին Նորվեգիայում: 1905 թվականին անդամագրվել է «Կին միսիոներների կազմակերպությանը», որից հե-

տո ուղարկվել է Օսմանյան կայսրություն: 1915-ին Մուշում ականատես է եղել, թե ինչպես են սպանում հոգեւորականների, ուսուցիչների, երեխաների: Մինչ ամբողջ աշխարհը դիտորդի կարգավիճակում էր, Բյորնը փրկել է անտուն մնացած հարյուրավոր կանանց ու երեխաների: 1917 թվականին Բյորնը որդեգրել է Ցեղասպանության ժամանակ որբ մնացած 2-ամյա Ռաֆայելին: Վերադառնալով Նորվեգիա՝ նրան մկրտել է եւ տվել Ֆրիտյոֆ Նանսեն անունը: Բյորնի օրագրերն ու արած լուսանկարները կարեւոր տեղ ունեն Ցեղասպանության պատմության մեջ: Ամենահայտնի լուսանկարներից է 20-ականներին օսմանյան մեջլիսի նախկին ներկայացուցիչ Փափազյանի՝ Դեր Չոր անապատում հայերին պատկանող ոսկորները դի-

տելու պատկերը».-«Առաջին լրատվական»-ի փոխանցմամբ՝ գրում է «Ակոսը»:

Ինչպես նշում է «Ակոս»-ը, Սիրիայի, Լիբանանի եւ Ստամբուլի տարբեր մանկատներում աշխատող Բյորնը 1922 թվականին 7-ամյա Ֆրիտյոֆին Բեյրութի ֆրանսիական դպրոցում թողնելուց հետո անցնում է Խորհրդային Հայաստան եւ Ալեքսանդրապոլում (Գյումրիում) «Լուսաբյուր» անունով մանկատուն հիմնում: 33 որբի համար «Կատարինե մայրիկ» անունով հայտնի կինը 2 տարի անց խորհրդային կառավարության դրամամբ թողնում է մանկատունն ու Սիրիա տեղափոխվում: Մինչեւ 1935 թվականն օգնում է Ցեղասպանությունը վերապրածներին: Նա կյանքից հեռանում է 1960 թվականին Նորվեգիայում:

«Մինչ Բողի Կատարինե Բյորնը Ցեղասպանության կարեւորագույն ակնատեսներից է, Նորվեգիայի վարչապետ Էռնա Սոլբերգը հայտարարում է, թե Նորվեգիան ոչ վարչապետի, ոչ արտգործնախարարի մակարդակով Երեւանում ներկա չի լինելու...», - գրում է պարբերականը:

Հիշեցնենք՝ օրերս հայտնի դարձավ, որ Էռնա Սոլբերգը հրաժարվել է ապրիլի 24-ին այցելել Երեւան՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Սոլբերգը կարեւորել է Թուրքիայի հետ հարաբերությունները, ինչի պատճառով էլ որոշել է հրաժարվել Ցեղասպանության 100-ամյակի միջոցառումներին մասնակցելուց:

«ԱՎՍՍ»

### Բոգդան Գեմբարսկին Յայոց ցեղասպանության մասին



Բոգդան Գեմբարսկին ծնվել է 1908թ. Լեհիստանում, իսկ 1936թ. խորհրդային իշխանությունների հետապնդումներից ստիպված տեղափոխվում է Վարշավա: Նա մանրակրկիտ ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմությունը, մոտիկից ծանոթացել աշխարհահռչակ նկարիչ Մարտիրոս Սարյանի հետ, անձամբ եղել է Յայոց ցեղասպանության ժամանակահատվածում և համախառն կերպով կապ է պահպանել մինչև իսկ հիմա:

Այս ամենը հաստատելու համար ներկայացնում ենք Մարտիրոս Սարյանի նամակը Բոգդան Գեմբարսկուն:

«1962թ. հունիսի 3, Երևան  
Սիրելի Գեմբարսկի,

Ժողովրդի պատմության մեջ մնալը մեծ փառք է: Երջանիկ են այն արվեստագետները, մտածողներն ու գործիչները, որոնք հիշվում են ժողովրդի կողմից, դառնում են նրա սիրված անուններից: Առավել մեծ է, երբ այդպիսի մի մարդու սիրում է մեկ ուրիշ, մեկ այլ ժողովուրդ: Դա խոսում է նրա մարդկայնության, մարդասիրության, արդարատուության մասին:

Մենք սիրում ենք Ձեզ, սիրում ենք, որովհետև դուք մասնակցեցիք մեր բախտի, մեր ճակատագրի պայքարին, պայքար, որ դեռ երկար է շարունակվելու: Ես հիացմունքով եմ տալիս Ձեր անունը՝ որպես Մեծ Մարդու, արդարամիտ լեհի: Լեհ, որը իրավունք ունի լեհ կոչվել հենց նրա համար, որ իրեն երբեք օտար չէ մի այլ ազգի վիշտը, դժբախտ վիճակը:

Հեռու հեռվից համբուրում եմ Ձեզ, իմ լավ, իմ քաջ լեհ բարեկամ: Դուք նման եք ձեր հայրուհի, ազատասեր ժողովրդին: Ողջունում եմ ձեր ժողովրդին: Թող աշխարհում արդարություն լինի, այնպիսի արդարություն, ինչպիսին երազում եք դուք իմ ժողովրդի համար»:

Տոբեռիս հեղինակը Գեմբարսկու հետ ծանոթացել է 1967թ., Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում: «1996թ. ես գնացի Վարշավա ել այդտեղ իմացա, որ Բոգդան Գեմբարսկին մահացել է: Սկսեցի հետաքրքրվել նրա գերեզմանը գտնելու համար: Այն գտնվում էր Վարշավայի 5-րդ համարի գերեզմանատանը, 11-րդ շարքում: Մի համեստ գերեզմանաքար, որի ձախ մասում տեղադրված է հայկական մի փոքրիկ խաչքար: Ես ծաղիկներ դրեցի, եւ մտորումների մեջ էի, երբ ինձ մոտեցան երկու կին, որոնք նույնպես ծաղիկներ դրեցին գերեզմանաքարին: Տեսնելով ինձ՝ դիմեցին կտրուկաձև հայերենով՝ հայ եք: Ես պատասխանեցի՝ այո, եւ ծանոթացա Բոգդան Գեմբարսկու աղջկա՝ Չոյա Գեմբարսկու հետ, ով ինձ օգնեց Վարշավայում՝ 122-րդ դպրոցում, 2-րդ հերթով բացել հայկական դպրոց, որտեղ այցելում էին 70 հայ աշակերտներ, որից 10-ը Վարշավայում ծնված երեխաներ էին»,- գրում է Սարյանը:

Լեհ հրապարակախոս, հակաֆաշիստական գործիչ, թարգմանիչ, գրող Բոգդան Գեմբարսկու «Նամակներ աշխարհին» ժողովածուն ամփոփում է նրա մի շարք հակաթուրքական հոդվածները Յայոց արդար դատի պաշտպանությանը: Հանդես գալով 20-րդ

դարի 60-70-ական թվականներին՝ Բոգդան Գեմբարսկին մեծ կրթով դատապարտեց 1915թ. Ցեղասպանությունը, աշխարհի անտարբերությունը հայ ժողովրդի բռնադատված ճակատագրի հանդեպ եւ բարոյա-իրավաբանական գործոններով ապացուցեց, որ հայ ժողովրդի իրավունքները պետք է վերականգնվեն իր խլված հայրենիքի որոշակի սահմանների վրա: Այժմ այդ նամակներից մեկը որոշ կրճատումներով ներկայացնենք մեր ընթերցողներին:

Նամակ իմ հին թուրք ծանոթին:

«Ձեր նամակն ինձ համար մի հաճելի անակնկալ էր: Հետո սովորեցիք արդեն ձեր երկրի հետ ունեցած նամակագրությունից, որ ձեր հայրենակիցները մինչեւ օրս սիրով չէին պատասխանում Լեհաստանից ստացված նամակներին, թեեւ կարող է պատահել նաեւ, որ նամակները բոլոր դեպքերում չէ, որ հասել են ձեզ: Այժմ գուցե աստիճանաբար փոփոխություն կատարվի դեպի լավը:

Համենայնդեպս, երկուսս էլ բավականաչափ պատմական հիմքեր ունենք՝ մեկս մյուսի երկրով փոխադարձաբար հետաքրքրվելու: Ինչ վերաբերում է ինձ, ես լրացուցիչ մի տեսանկյունով հետաքրքրվում էի ձեր հայրենիքով, ուղղակի անհաղթահարելի անիրաժեշտություն էր զգում նայելու աչքերին մի մարդու, որը պետք է պատասխանատվություն զգար մարդկանց գործունեության համար: Մենք ծանոթացանք 1936 թվականին: Անմիջապես սկսվեց մեզ ամենից ավելի հետաքրքրող վճռական խոսակցությունը: Ես երկար ուսումնասիրում էի ձեզ, եւ պետք է խոստովանեմ, որ առաջին շփումը ձեզ հետ ինձ վրա գործեց ամենալավ տպավորությունը: Մինչ օրս էլ հիշում եմ, թե ինչպես գունատվեցիք, երբ առաջին անգամ հարցրի ԱՅՆ բանի մասին, եւ մատիտը ձեր ձեռքին՝ սկսեցիք ճշտել իմ հարցը՝ դիմելով անվերջ աճող թվերի սյունակի օգնությանը: Դուք ջղաձգորեն թղթի վրա աճող թվերի վրա նորանոր բանակուսիներ էիք նկարում եւ չէիք համարձակվում աչքերիս նայել: Իսկ հետո փնթփնթացիք, որ երբ այդ ամենը կատարվել է, դուք դեռ շատ փոքր եք եղել:

Պարզ էր, որ ինչ-որ կցկտուր բաներ հասել էին ձեր ակնաչին, բայց երբեք չէիք երեւակայում, թե ԱՅՂ ԲԱՆԸ հենց ԱՅՂՊԵՄ է տեղի ունեցել, եւ այդ րոպեին դեռ ի վիճակի չէիք ինձ պատասխանելու, որովհետեւ պետք է այդ ամենի մասին խորհեիք եւ հասկանալիք: Դրանից հետո այլեւս չհանդիպեցի ձեզ: Ամենից ավելի հավանականն այն էր, որ խուսափում էիք ինձանից՝ ընդհուպ մինչեւ Լեհաստանից մեկնելու օրը: Այդ խոսակցությունից անցել է 25 տարի: Կխոստովանեմ, անշուշտ, որ դա այնպիսի ժամանակահատված է, որ լիովին բավական է ամբողջ խնդրի մասին մտածելու եւ նրանից տղամարդու եզրակացության հանգեցնելու: Մասնավորապես, որ ձեր ժողովուրդը չի մասնակցել ոչ մի պատերազմի եւ չի կրել այնպիսի հասարակական վերափոխություններ, ինչպիսիք Լեհաստանը: Մի հանգամանք, որ որոշ չափով արդարացնում է իմ սեփական թույլությունը: Համենայնդեպս, ձեր նամակում ամենալինչին հիշատակություն անգամ չկա այդ նշանավոր խոսակցության մասին. կարծես թե դա ընդհանրապես տեղի չի ունեցել: Տողերդի արանքում կարդացի, որ հիանալի հիշում եք, թե ինչի մասին էիք խոսում այն ժամանակ, եւ որ ոճագործություն անվանելով Այխմանի անօրինական գործունեությունը՝ գիտակցաբար խոստովանում եք իմ առջեւ: Չէ որ դուք լավ գիտեք, որ Այխմանը եղել է ձեր ուշիմ աշակերտը միայն, եւ այն, ինչ որ նա անում էր 1942-1944 թթ. հրեաների նկատմամբ, կրկնողությունն էր ավելի մեծ չափով նույն բանի, ինչ որ ձեր հայրենակիցները գործել են հայերի նկատմամբ դեռեւս 1915 թվականին: Իսկ դա եղել է խնդրում եմ հիշել մարդկային գործունեության մեջ առաջին ծրագրված ամբողջ ժողովրդի ոչնչացումը: Այդ՝ մինչեւ մանրույնները մտածված կոտորածը բացարձակապես ոչ մի ընդհանրություն չունի ինչ-որ Աբդուլ Համիդի անկազմակերպ գործողությունների հետ 1895-96թթ.,

երբ հայերի դեմ էին ուղղվել քրդերի վայրի հորդումները: Ու հասարակության տակալները հասան միանգամայն համեստ «արդյունքների»՝ ինչ-որ երեք միլիոն սպանվածներ:

1915 թվականի կոտորածի ժամանակ, որը շարունակվեց հաջորդ հինգ տարիների ընթացքում, ընդհուպ մինչեւ հայերի դիմադրության բոլոր կետերի վերացումը: Կետեր, որոնք գտնվում էին Կիլիկիայում, Անատոլիայում, Վանա լճի շրջակայքում, Ասիայում, ռուսական Ադրբեջանում եւ Դարսի մարզում: Այս կոտորածի ընթացքում զոհվեցին ընդհանուր թվով երեք միլիոն հայեր, որը կազմում էր ամբողջ ժողովրդի 60 տոկոսը: Այդ համապարփակ ջարդերից խուսափեցին միայն նրանք, ովքեր գտնվում էին ձեր իշխանության սահմաններից դուրս: Վերադառնալով ներկայիս, եւ հաշվի առնելով քանակական վիճակը 1911 թվականին, ինչպես եւ նրանք բնական աճի տոկոսը վերջին 50 տարիների ընթացքում, ընթացիկ 1961 թվականին նրանք պետք է հասնեին տաս միլիոնի, իսկ իրականում չորս միլիոն են: Ուրեմն, սպանվելով մի մարդու, սպանում են նրա դեռեւս չծնված սերունդներին հարյուրավոր, հազարավոր տարիների հեռանկարով: 1915-20թթ. երեք միլիոն սպանվածները 40 տարվա ընթացքում կդառնան վեց միլիոն չծնվածներ: Մոտ երկու միլիոն հայ զոհվեց այդ արշավանքի առաջին տարում՝ 1915 թվականին, երբ այն ժամանակվա ձեր ներքին գործերի միևնույն թափառք բեյը պաշտոնապես հայտարարեց, թե «չկա հայկական հարց, բանի որ չկա հայ»: Թափառք բեյը եւ Էնվեր փաշան, երկուսն էլ արժանի պատիժ ստացան, թեեւ չափազանց մեղավոր: առաջինը սպանվեց Բեռլինում, 1921թ., Սողոմոն Թեյլեթյանի ձեռքով, մյուսը՝ 1932թ. ռուսական պարտիզ գնդակից/գնդապետ Մելքունովի կողմից: Նշավակման արժանի երրորդ ջարդարարը ձեր իստեղիգեցիկն է, որը ինքնակամ օժանդակեց ճորագործների կազմակերպած ազգայնամոլ հալածանքին այն ժամանակ, երբ հասարակ ժողովուրդը, մուսուլման հոգեւորականությունը եւ իրենք՝ ազնվական տոհմերը, կամ բոլորովին չեն մասնակցել կոտորածին, կամ նույնիսկ փորձեր էին անում հայերին փրկելու: Չգիտեմ, թե ամբողջ համաշխարհային գրականության մեջ կգտնվի՞ արդյոք ավելի ցնցող տեսարան, քան Ֆրանց Կեֆերի պատմած մի քանի ծեր թուրքերի մասին, որոնք գաղտնագողի բարձրանում էին Մուսա լեռան վրա պաշարված հայերի մոտ, որպեսզի նրանք մի քիչ ուտելիք հասցնեն: Գրեթե այդ փաստի համար կարելի է ընդմիջտ սիրել ձեր ժողովրդին: 1915թ. հայերի կոտորածը Այխմանի կողմից՝ իրենց հիմքում կոտորածի բնույթ չունենի. նրանք ներկայացնում էին «նոստրալիանական կարգադրությունների» հրամաններ, որոնք արդյունքները հասցրին միլիոնների անխուսափելի սոսկալի մահվան: Ըստ մեզ քաջ հայտնի սխեմաների՝ նախ եւ առաջ իշխանության կողմից հրաման էր արձակվում, որի համաձայն՝ բոլոր հայերը պարտավոր էին թողնել տվյալ վայրը սովորաբար երկու ժամվա ընթացքում: Նոր բնակավայր հասնելու համար թույլատրվում էր հետը վերցնել միայն ձեռքի ուղեբեռ՝ թողնելով ամբողջ ունեցվածքը նոր՝ մուսուլմանական բնակչությանը:

Խիստ արգելվում էր օգտվել տրանսպորտի որեւէ միջոցից: Ոչ մի բացառություն չէր արվում ծերերի, հիվանդների, երեխաների ու նույնիսկ հիվանդանոցի համար: Հետիոտների երթը Անատոլիայի ամառվա կիզիչ արեւի տակ, ուղեկցում էին հրացաններով ու մտրակներով զինված ոստիկանները: Եթե մուսուլման սրտացավ գյուղացիներից մեկը փորձում էր ջուր տալ կայրերին, անմիջապես մտրակների հարվածներ էր ստանում կամ սպանվում տեղն ու տեղը: Եթե գերյալներից մեկն ու մեկն ընկնում էր ուժասպառ/որը պատահում էր ամեն վայրկյան/, ոստիկանները սպանում էին նրան կամ հարվածում կոշիկներով: Երթի հետեւից քաշ էին գալիս չէչենների ու թափառաշրջիկների հրոսակախմբերը, որոնք լվտի ծաղր ու ծանակով մերկացնում

էին դիակները ոստիկանների լուռ համաձայնությամբ ու թույլատվությամբ, խլում, փախցնում էին երտասարդ կանանց ու աղջիկներին, հենց որ նրանցից մեկն ընկնում էր կամ մի քայլ ետ էր մտնում ընդհանուր երթից: Բազում բռնություններից հետո նրանք նահատակում էին նրանց ամենալկտի ձեռքերը: Եվ դա, իմիջիայնոց, կատարվում էր գաղտնի իրահանգի համաձայն, որը տրվում էր ոստիկանների կողմից եւ որի իմաստն աքսորյալներին ճանապարհին մեռցնելն էր: Կանանց, երեխաներին ու ծերերին քշում էին ավելի հեռու, մինչեւ բնաջնջման ճամբարները, որոնք տեղադրված էին Միջագետքի անապատում:

Հայկական գնդերի զինվորները, որոնք այնպես դյուցազնաբար կռվում էին Էնվեր փաշայի կյանքի համար, հենց նրա հրամանով բաժանվեցին ընդհանուր բանվորական դրուժինաների, ըստ որում, ինչպես գիտեք արդեն, նրանցից ամեն մեկը պետք է կատարեր միայն մեկ, սակայն առավել ուժասպառ անող հանձնարարություն: Հանձնարարությունը կատարելուց հետո ամբողջ դրուժինան ոչնչացվում էր նահատակող վաշտի կողմից: Ստամբուլն այն ժամանակ դեռեւս հայկական ու հունական կուլտուրայի համաշխարհային կենտրոն էր, ոչ պակաս, քան թուրքական կուլտուրայի: Ըստ երկրի՝ դա երեք ժողովուրդների բաղաբն էր, ըստ որում՝ հայկական կուլտուրական միջավայրը գերազանցում էր մնացածներին երկու հարկով: Այստեղ մի ժամանակ ստեղծագործում էին Դուրյանը ու Գեշկիթաշյանը՝ արեւմտահայ ամենամեծ բանաստեղծները, քրիստոնեական Արեւելքի Բայրոնն ու Շելլին: Եվ նրանց հետեւից գնում էր բանաստեղծների, հիանալի սովետիստների, դրամատիկ ակնառու հեղինակների մի ամբողջ աստղաբաշտ: Ով որ այդ կաճառից ապրել էր մինչեւ 1915 թվականը, իր մահկանացուն կնքեց այդ թվականին: Այն ժամանակ նահատակության ճանապարհին բանտերում կամ համակենտրոնացման ճամբարներում գոհվեցին Գրիգոր Չոխրապը, Երվանդ Սմբաթեղիանյանը/Երուխան/, Ռուբեն Չարդարյանը եւ տասնյակ այլ հանրաժանութի գործիչներ, արտիստներ, երաժիշտներ: Հանձնարել կոմպոզիտոր ու ժողովրդական երգեր հավաքող Կոմիտասը հրաշքով կենդանի մնաց, սակայն ընդմիջտ կորցրեց բանականությունը: Մահացավ Փարիզի հոգեբուժական հիվանդանոցում՝ 1935թ., 20 տարվա խելագարությունից հետո:

Ամեն դար ունի իր ստույգ դեմքը: 20-րդ դարը նախորդից տարբերվում է նրանով, որ հանդիսանում է ամենամեծ փոխհարաբերությունների դարը: 20-րդ դարի ամենամեծ ոճորագործությունները մարդասպանություններն են, այսինքն՝ ամբողջ ժողովուրդների տանջամահ անելու փորձերը, որոնք բարեբախտաբար, մինչեւ այժմ երբեք չեն պակսել 100 տոկոսանոց հաջողությամբ: Ուղղակի չեմ կարողանում երեւակայել, որ ձեր լեզվով լույս տեսնի որեւէ հայկական Աննա Ֆրանկի հուշատետքը, չնայած որ այն սոսկալի տարիներին սպանեցիք անվազն մեկ միլիոն չափահաս աղջիկների ու դեռատի կանանց, որոնք այն ժամանակ Արեւելքի համար բավականաչափ կիրթ էին: Նույնիսկ Ֆրանց Կեֆերի կյանքի գիրքը, որն, ինձ հայտնի է, ձեզ մոտ արգելված գրականության ցանկում է գտնվում: Չէ՞ որ, այն բարոյական խթանները, որոնք ստիպում են եվրոպական հասարակություններին՝ խուսափել գաղութների ազատագրման եւ ինչ վերափոխանքների փոխհատուցման փաստից, չեն կարող խորթ լինել նաեւ ձեզ:

Եվ հենց այդ պատճառով՝ այն ցավալի խնդիր, որ նամակիս նյութն է, ինձ համար իր մեջ պարունակում է ինչ-որ անլուծելի հոգեբանական մի խնդիր, որի վրա ապարդյուն տանջվում եմ տարիներ ի վեր:

Եվ հավատացնում եմ ձեզ, որ ես մենակ ու մեկուսի չեմ: Իմ անհանգստությունը համա-միտ են բոլոր նրանք, ովքեր անտարբեր չեն ձեր ազնիվ ժողովրդի պատմի ու բարի անկան հանդեպ:

Պատրաստեց՝ Դավիթ ԱՌՈՒՍՍՈՅԱՆԸ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ  
Ստեփանակերտ, Կոմունյանց 17,  
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com  
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արժարժված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր  
Ալեսյա Բեջանյան